




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

352(47.925)

L-79

93

„ԵՐԻՆՏ“

Изд-ство „ЕРИНТ“

Խմբագրութեամբ ՍՈՒՐԵՆ ԵՐԶԻՆԿՅԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՌՎԱՅ ՆԷՅՏՐԱԼ ԶՕՆԱՅԻ
ԳԻՒԼԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ

I

(Գումարված 1919 թ. դեկտեմբերի 14-ին)

Թիֆլիս—1921

Под редакцией СУРЕНА ЕРЗИНКЯНА

ПРОТОКОЛЫ

Совета Крестьянских Депутатов
Лорийской Нейтральной зоны

I

зв. 14 декабря 1919 г.)

Тифлис—1921

52(47.325)

Լ-79

1 MAR 2010

352(47.925)
L-79

Հրատարակ. „ԵՐԻՆՏ“ Изд-ство „ЕРИНТ“

300
1242-60

Խմբագրութեամբ ՍՌԻԲԷՆ ԵՐԶԵԿԵԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԼՕՌՎԱՅ ՆԷՅՏՐԱԼ ԶՇՆԱՅԻ
ԳԻՒԼԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ

I

(Գումարված 1919 թ. դեկտեմբերի 14-ին)

Թիֆլիս—1921

Под редакцией СУРЕНА ЕРЗИНКЯНА

ПРОТОКОЛЫ

Совета Крестьянских Депутатов
Лорийской Нейтральной зоны

I

(Созв. 14 декабря 1919 г.)

Тифлис—1921

11663

33
865

10 3 MAY 2013

40.049

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Անցած, 1919 թվի դեկտեմբերի 14-ին Ուղղունարում գումարված Լուվայ «Նէյտրալ զօնայի» շատ ու շատ կողմերով նշանակալից Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդը ի միջի այլոց այն նշանակութիւնն ունեցաւ, որ արթնացրեց Լուվայ աշխատաւոր գիւղացիութիւնը այն անտարբերութիւնից ու թրմութիւնից, ուր նրան նետել էին տնտեսական-քաղաքական ծանր պայմանները հայ-վրացական անիմաստ պատերազմից յետոյ, որը ոչ մի խնդիր չըլուծեց և բոլոր խնդիրները էլ աւելի խճճեց, բարդեց:

Անօգնական ու յուսահատ, Սադախլօի ու Քմեօլագերանի անարդարութիւնների ու ոճիւրների մէջ մզուղ, խեղաւող այդ ամբողջ շրջանը, յիսունից աւելի գիւղերով, դեկտեմբերի 14-ի այդ մեծ ժողովում գիտակցեց, որ տէրերի սիրալիր և փաղաքշական խօսքերը, անհատների բարի ցանկութիւններն և խոստումները, անծայր համբերութիւնն ու հեղութիւնը չեն գնահատվում, ոչ մի լաւ հետեանքի չեն բերում,—որ ընդհակառակը՝ միայն կռիւր գիտակցած իրաւունքների համար, միայն բողոքի ձայնը ապօրինութիւնների ու շահագործման դէմ կարող են բարոգել աշխատաւոր գիւղացու ծանր դրութիւնը:

Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդը բռնեց բողոքի ու կռիւի ուղին: Նրա ոչ մի դիմումի, բանաձևի մէջ—ուղղած «հարեան պետութիւններին»—դուք չէք դառնի խնդրել խօսքը. և դա մի սոսկ պարահաւանութիւն չէր, այլ միանգամայն մտածված քայլ:

Եթէ լաւ յիշենք, թէ ինչ պայմաններում Լուվայ աղքատ ու աշխատաւոր գիւղացիութիւնը «առաջարկում» կամ «ի գիտութիւն» էր յայտնում Նէյտրալ զօնայի տէր ու տնօրէն կառավարութիւններին իր որոշումների մասին,—եթէ յիշենք, որ Հայաստանում թագաւորում էր դաշնակը, Վրաստանում՝ մէնշէվիկը և Ադրբէյջանում—մուսաֆաթը, որ Դէնիկին-վրանդէիան հրոսակները տիրել էին ամբողջ Հիւսիսային Կովկասին և արշաւում Մոսկովայի վրայ,—եթէ յիշենք, որ Անդրկովկասի «անկախ»

3192-91

մանրապետութիւնները արդէն հրճվում էին ոռոսական ըէակ-ցիայի յաղթանակով և ամեն կերպ յարմարվում «մեծ և միացեալ» Ռուսաստանի օտար և հայրենի «վերածողների» ճաշակին— ապա պարզ կըլինի Լօովայ գիւղացիութեան «յանդգնութեան» նշանակութեան ամբողջ մեծութիւնը:

Ձմեռանանք նկատել, որ Լօովայ գիւղացիութեան մի որոշ մասը դեռ ամբողջովին չէր կարել իր հաւատը դէպի «հարեան պետութիւնները» բարի ցանկութիւնը... Նա յոյս էր տածում, որ գոցէ թէ յաջողի գէթ մասնակի բաւարարութիւն ստանալ հայոց և վրաց կառավարութիւններից այն տարրական պահանջների համար, որ բոլորի աչքում աւելի քան արդարացի էր և նոյնիսկ չափազանց համեստ,—նա կարծում էր, թէ «թիւրիմացութիւնները» «տարածայնութիւնները» հետեանք են կառավարութիւնների տեղական օրդանների, ինչպէս ասում են մեր ձորերում Ալլահվերդու պիսէր-պրիստաւի չարամտութեան և անբարեխղճութեան և ոչ թէ դաշնակցական ու մէնշէվիկական մտածված քաղաքականութեան արդիւնը: Սակայն մեր գիւղացիութեան այդ «միամիտ» մասն էլ շուտով համոզվեց, որ այս աշխարհի տէրերի վրայ (երբ տէրը ինքը ժողովուրդը չէ) շատ էլ յոյս դնել չի կարելի, որ ժողովուրդը իր իրաւունքները իրականացում է, և ոչ թէ խնդրում կամ յստանում չգիտեմ ունից:

Այդ պատմական խորհրդով Լօովում սկսվում է բողոքի և կռիւի շրջան:

Գիւղացիութիւնը պահանջում է տեղական ինքնավարութիւն—գէմատօ. նրան արգելում են և մերժում ճանաչել «ինքնակոչ» գէմատօն: Բայց ինչ փոյթ թէ հարեան պետութիւնները չեն ուզում տեղական ինքնավարութիւն տեսնել Լօովում. գէմատօն գործում է հակառակ ամեն խոչնդատի և զօնան կառավարվում էր իսկապէս գէմատօյով, որը շատ աւելի մեծ իշխանութիւն ունէր՝ քան կառավարութեան վարչական մարմինը: հարկերի, հողերի, անտառների, գիւղատնտեսական, դատաստանական օգնութեան, նոյնիսկ ապրանքը զօնայից արտահանելու համար դիմում են գէմատօին:

Գիւղացիութիւնը առանց հաշիւի առնելու, նոյնիսկ բացասաբար վերաբերվելով Հայաստանում և Վրաստանում գործող հողային օրէնքներին,—հակառակ կառավարութեան ներկայացուցիչների արգելքի «օրէնքի» հրամանին,—լուծում է Լօովում հողային խնդիրը Ռուսաստանի Բանւոր-Գիւղացիական մեծ յեղափոխութեան ոգով:

Շատ հետաքրքիր է տեղական Գիւղական Հողային Կոմիտէների Համագումարի աշխատանքները, որոնք տեղին ամբողջ իննը օր: Պէտքէ օր առաջ լոյս ընծայել այդ ժողովների արձանագրութիւնները, որովհետեւ նրանք սքանչելի ապացոյցն են թէ ինչպէս տրէխ հագած հասարակ մահկանացուները դպրոցական սեղանի շուրջը նստած, մէժէվոյ պլանները և գիւղական չափերը առաջները, տաք-տաք, կրքոտ վիճում են, բայց սիրով ու համերաշխութեամբ, յաճախ փոխադարձ զիջումներով, գործողութեամբ լուծում հողային կնճռոտ հարցերը, երբ նրանց չեն խանգարում էս աշխարհի տէրերը: Եւ երբ հողատէրերը և ադնականները՝ միացած պիսէր ու պրիստաւներին, վերջիններիս դրդմամբ, փորձում են խախտել Լօովայ Գիւղական Հողային Կոմիտէների խորհրդի որոշումները՝ Լօովայ Հողային Գլխաւոր Կոմիտէի ղեկավարութեամբ աղքատ ու աշխատաւոր գիւղացութիւնը գէնքը ձեռնի դուրս է գալիս պաշտպանելու «Յեղափոխութեան հողային մեծ դէկրէտը»: Աւելի քան հինգ հարիւր հոգուց կազմած բանակը, զինւորական կարգով և թվանքները ուսին, շրջում է Ուզունլարի, Արդվու, Իգահատի, Մղարթի ու Ղաչաղանի դղերը և սաստում մեծ ու փոքր ադնականներին «խեղօք» մնալ: Շրջանի մեծ ու փոքր տղուկները սարսափահար իրանց պարտքն էին համարում ներկայանալ զինւած գիւղացութեան հրամանատարին և իրենց անպայման հնազանդութիւնը յայտնել...

Վերջապէս ապրիլի 18 և 19-ին գումարվում է Լօովայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւորների Երկրորդ խորհուրդը, որը անխնայ քննադատութեան է ենթարկում հայոց և վրաց կառավարութիւնների, մէնշէվիկական դաշնակցական քաղաքականութիւնը Լօովայ վերաբերմամբ: «Հարեան պետութիւններին» մնում էր մի վերջին քայլն անել ազատվելու համար Լօովայ աշխատաւորութեան բողոքող ձայնից, այն է՝ դիմել բրութեան, ոյժի: Եւ իրար կրծող դաշնակն ու մէնշէվիկը անօրինակելի համերաշխութեամբ, ցրեցին Գիւղացիական ներկայացուցիչների խորհրդի ընտրած Գործադիր Մարմինը և Զէմատօյին վարչութիւնը, աքտորելով Քութայիսի և Ղարաքիսայի բանտերը ժողովրդի տասնհազ ներկայացուցիչներ: Բայց դրանով չի վերջանում մէնշէվիկ-դաշնակցական համերաշխութիւն սխաւգործու-

թիւները. գաշակցական յայտնի Թոռոցիկ Գէորգի զեկավարութեամբ վարձկան զինված խմբերը մեր գիւղերն ընկած խուզարկութիւններ են կատարում գիւղական խրճիթներում, գիւղերները շրջապատում և զինաթափ անում անվտանգի գիւղեր, կանգնեցնում ձորերում երկաթուղու գնացքները և միջից ցած բերում իրանց ոչ հաճելի լոռեցիներին և բանտարկում ու արտօրում Հայաստան կամ Վրաստան...

Մեզ բարեբաղտաբար յաջողվեց խուսափել զինված ընթացքում, համոզել ժողովրդին հարևան պետութիւնների պրովոկացիային զոհ չըղառնալ...

Այլևս միանգամայն պարզվեց ժողովրդի համար, որ հարևան պետութիւնները չեն կարող, չեն ցանկանում ընդառաջ գնալ Լոռվայ աշխատաւորութեան արդար պահանջներին, որ անկարելի է խաղաղ ճանապարհով վերականգնել ժողովրդական մասսաների ոտքի տակ արված իրաւունքները:

Կոխը շարունակվելու է: Հաւանօրէն Լոռվայ սարերն ու ձորերը նորից պէտք է պատերազմի, ապստամբութեան բնագոտնան. բայց այս անգամ պատերազմը քաղաքացիական բանտարկութիւն կը կրի, որովհետև Լոռվայ աղքատ ու աշխատաւոր գիւղացութիւնը ամենեւին տրամադրութիւն չունի զօնայի յօգուտ գաշակցական Հայաստանի կամ մէնչէվիկական Վրաստանի վճռելու համար զէնք վերցնել:

Ս. Ե.

1920—մայիսի 23-ին

Հաղպատ

Ե. Գր.—Խորհրդային Ռուսաստանի և մէնչէվրաստանի մէջ կայացած համաձայնութեան շնորհիւ ինձ միջոց տրվեց 24 ժամում Թիֆլիսի վրայով անցնել Սովետական Ռուսաստան: Դժբաղտաբար ժամանակի սղութեան պատճառով, ես անկարող եղայ կատարել հարկաւոր խմբագրական աշխատանքը և արձանագրութիւնները լոյս են տեսնում համարեա այնպէս, ինչպէս որ ես ստացել եմ Խորհրդի քարտուղարութիւնից: Ժողովում իմ ասածներին վերաբերմամբ պէտք է ասեմ, որ ես աշխատել եմ որքան կարելի է լոռեցուն մատչելի, հասկանալի լինել:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1919 թվի դեկտեմբերի 14-ին ցերեկվայ ժամը 11-ին Ուզունլարի դպրոցի դահլիճում բացվեց Լոռվայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդի նիստը: Ներկայ էին նէյտրալ զօնայի յիսուն գիւղից քառասուն և չորս գիւղի ներկայացուցիչներ. եկել էին հայ, հուս, յոյն գիւղերի պատգամաւորներ. ձեռնպահ էին մնացել միայն թուրք գիւղերը, որոնք սակայն Ուզունլար լուր էին ուղարկել հարևան հայ գիւղերի պատգամաւորներին միջոցով, որ թէև մեծ ցանկութիւն ունեն մասնակցելու Ուզունլարում գումարվելիք Գիւղացիական Խորհրդի աշխատանքներին, բայց գաշակցական Հայաստանում և մուսաֆաթիստական Ադրբէյջանում տեղի ունեցող հայ-թուրքական ընդհարումները երկիւղ են ներշնչում թուրք գիւղացութեան ներկայացուցիչներին անցնել հայկական գիւղերը:

Ժողովը բացէ անում Կազմակերպիչ բիւրօի կողմից գիւղատնտէս Աշոտ Աթանասեանը:—

Ի նկատի ունենալով Լոռվայ նէյտրալ զօնայի տնտեսական ծանր կացութիւնը, մի խումբ լոռեցիների մէջ այն միտքը յղացաւ, որ պէտք է փորձել այս դրութիւնից դուրս գալ և որ հնարաւոր է այդ մտցնելով Լոռում տեղական ինքնավարութիւն, զեմատվօրկազմակերպիչ բիւրօի անդամները շրջելով զօնայի գրեթէ բոլոր գիւղերը, կազմակերպել են դասախօսութիւն-զրոյցներ, բացատրել զեմատվօրի նշանակութիւնը, կատարել են շատ տեղ ներկայ համագումարի համար գիւղական պատգամաւորների ընտրութիւն: Կազմակերպիչ բիւրօն այսօր տեսնելով այս պատմական պատկառելի գիւղացիական համագումարը, իրան բաւարարված է համարում և առաջարկում է ընտրել պրեզիդիում, նախագահութիւն:

Միաձայն ընտրւում են—նախագահ՝ Աշոտ Աթանասեան, փոխ-նախագահներ՝ Սարգիս Զուրաբեան և Սուրէն Երզնկեան: Քարտուղարներ՝ օրիորդ Վերգօ Թումանեան, Համայնակ Երզնկեան, Յարութիւն Դուրգերեան և Գ. Դարգաշեան:

Նախագահ Աշոտ Աթանասեան.—Մեզ մօտ հիւր են եկած Թիֆլիսից Վրաստանի հայոց ազգային խորհրդի գործադիր մար-

մնի նախագահ Արամայիս Երզնկեանը և նոյն մարմնի պարենա-
ւորման բաժնի վարիչ՝ Արշակ Միանասարեան. ևս առաջարկում եմ
ընտրել նրանց մեր ժողովի պատւաւոր նախագահներ:

Առաջարկն ընդունվում է:

Ա. Աթանասեան.— Կազմակերպիչ բււրօն մշակել է ներ-
կայ ժողովի համար հետևեալ օրակարգը.

- 1) Լօսվայ նէյտրալ զօնայի դրութիւնը
զեկուցանող Սուրէն Երզնկեան.
- 2) Գիւղատնտեսական օգնութեան հարցը
զեկուցանող գիւղատնտես Աշոտ Աթանասեան.
- 3) Բժշկական օգնութեան հարցը
զեկուցանող բժիշկ՝ Գ. Մելիք-Գրիգորեան.
- 4) Դպրոցական խնդիրը նէյտրալ զօնում
զեկուցանող Յարութիւն Դուրգերեան.
- 5) Տուրքերի խնդիրը—զեկուցանող Սարգիս Զուրաբեան.
- 6) Արդարադատութեան խնդիրը
զեկուցանող Սուրէն Երզնկեան.
- 7) Հողային խնդիրը—զեկուցանող Սարգիս Զուրաբեան.
- 8) Պարենաւորման խնդիրը
զեկուցանող Արշակ Միանասարեան.
- 9) Զեմատիօ—զեկուցանողներ Աշոտ Աթանասեան և
Սուրէն Երզնկեան.
- 10) Գործադիր Մարմնի ընտրութիւնը:

Եթէ գիւղացիական պատգամաւորներից ոչ ոք առաւելու-
թիւն չունի ներկայ օրակարգի դէմ, ապա ես կը դնեմ քվէար-
կութեան:

Միաձայն հաստատվում է վերը բերված օրակարգը:

Ա. Աթանասեան.— Օրակարգի առաջին խնդիրն է «Լօսվայ
նէյտրալ զօնայի այժմեան դրութիւնը». խօսքը պատկանում է
ընկեր Սուրէն Երզնկեանին:

Սուրէն Երզնկեան.— Սիրելի լուսնայիններ. Այս մի նշանաւոր,
շատ նշանաւոր ժողով է: Առաջին անգամն է, որ մեր ձորերում
էսպիսի մեծ ժողով է հրաւիրվում: Եւսօր մենք—լուսնայիններս, ռանչ-
պարների ու քեսախիւների ներկայացուցիչները, ժողովել ենք Լօսվայ
կենդրոն գիւղում, Ուղունւարում ու մեր ցաւերի մասին ենք խօսում,
մեր դարձերին դեղ ու դարման ենք ուզում անել, մեր երկիրը
փորձում ենք հանել էն անմխիթար վիճակից, ուր նա ընկել է

լուսնայինների կոմքի, բարի ցանկութեան հակառակ: Մենք չէ. որ
մեր սիրուն երկիրը էս օրվան ենք հասցրել...

Էս հինգ վեց տարվայ մեծ ու փոքր պատերազմները քան-
դեցին, աղքատացրին ոչ միայն Լօսին, այլև ամբողջ աշխարհը:

Ուսումնական մարդիկ ասում են թէ էս աշխարհի տէրերի,
հարուստների և կուլակների սարքած պատերազմը մի քանի միլ-
լիօն սպանվածներ է տվել ու սպանվածներից էլ մի քանի ան-
գամ աւելի ինվալիդ, սալաթված մարդիկ: Ընտանիքները կոր-
ցնելով երիտասարդ ու աշխատող մարդկանց, պառուների ու
աշխատանքից յղանածների վրայ են դրել իրանց յոյսերը, ու էդ
պառաններն ու բէղարածները ոչ միայն իրանց պիտի պահեն ու
կերակրեն, այլև մնացած որբերին ու աշխարհիկներին, պատերազ-
մում վիրաւորվածներին, սալաթվածներին ու հիւանդացած-
ներին, մինչև որ նոր ու երիտասարդ ձեռքերը իրանց տեղը բռնեն,
մինչև որ Յեղափոխութիւնը ամեն տեղ յաղթի, բոլոր մարդիկ
թուր ու թվանքը վեր դնեն ու խաղաղ աշխատանքի դառնան:

Յեղափոխութիւնը, որին բանւորներն ու գիւղացիները էն-
քան ժամանակ ապաստում էին, չի կարողանում անմիջապէս ու
ամբողջապէս լուծել, վճռել բոլոր հարցերն ու բարելաւել աշխա-
տաւորների դրութիւնը, որովհետև հին ուսման, բռնապետական
ըրջանն ու էս երկրի ուժեղների, ունեւորների համար մղած կոր-
ծանիչ պատերազմը թողել են մեզ քարուքանդ եղած երկիր, մի
աւերիւած ժառանգութիւն:

Կովկասը դուրս գալով Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան
վաքից, նմանվեց իր զեկը կորցրած մի նաւի, որին ամեն ալիք,
ամեն քամի իր ուղած կողմն է քշում, տանում: Ամեն մարդ իրան
մեր երկրի տէր է համարում ու իսկական տիրոջ, ժողովրդի Ուլիկ
յոյսի անող չկայ: Էս մի երկու տարվայ մէջ մենք տեսանք ու փոր-
նեցինք շատ իշխանութիւններ մեր երկրին եկան տիրեցին գերմա-
նացիները, տաճիկները, յետոյ եկան անգլիացիները, ամերիկացիներ-
ը և ուրիշները: Առանց եւրոպա գնալու մենք տեսանք ու ճա-
ակեցինք եւրոպայի բոլոր կառավարութիւնների համը: Ի՞նչ
ովին նրանք մեզ դէ ես ի՞նչ ասեմ ու պատմեմ ձեզ, դուք բո-
լորդ է՞ք բանը ինձանից լաւ գիտէք...

Կովկասի աշխատաւոր ժողովուրդները բռնի կերպով բա-
խանված իրարից ու իրար թշնամի, էսօր արդէն խեղճի են եկել
ու աշխատում են՝ առանց ուրիշների վրայ յոյս դնելու, շինել ի-

րանց փլուղ նաւակի համար մի ղեկ, որ էն ամբը իջն ուր միայն աշխատաւորը կարող է երջանիկ ու հանգիստ ապր փորձում են լաւ թէ վատ մի ճանապարհ գտնել իրանց դէ թիւնը մի փոքր փոխելու, լաւացնելու: Մեր գեղեցիկ Լոռ ժողովուրդն էլ պիտի իր նաւի, իր գրութեան մասին մտածի: Եթէ մեր գիւղացուն հարցնելու լինենք, թէ ինչ ամ նէյտրալ զօն, էդ խօսքը ինչ է նշանակում, նա առանց կար մտածելու կասի թէ նէյտրալ զօն ասել է թէ՛ անտէր գ անտէր երկիր...

Մեր Լոռին էսօր իսկապէս մի անտէր տարածութիւն Վրաստանի ու հայաստանի մէջ ընկած, որովհետեւ ոչ ոք մտածում նրա մասին: Քանի անգամ էս «անտէր զօնի» ժողովուրդը դիմել է աջ ու ձախ Լոռվայ «տէրերին», աղաչել զլիապի գութերնատորին, պաղատել ամերիկացի մայրին, բոլոր տիրող կարգերի դէմ, բայց բան չի դուրս եկել: Էսօր մենք լորս համոզվել ենք, խելքի եկել վերջապէս, որ ոչ ոք չի կար մեր մասին, մեր Լոռվայ մասին սրտացաւ լինել ինչպէս մեր էնպէս մտածել՝ ինչպէս որ հարկաւոր է աշխատաւոր, քեռ ու ռանչպար գիւղացուն մտածել: Էսօրվայ էս նշանաւոր ժող առաջին գործը պիտի լինի լսելի դարձնել էս աշխարհի տէրեր իշխանաւորներին Լոռվայ տանջված գիւղացութեան ձայնը, աշխատաւոր ժողովրդի կամքը:

Ես շրջել եմ Լոռվայ գիւղերը, տեսել ու հարցրել թէ էնա ինչեր է կատարւում: Իմ շրջագայութեան, քիւղերը պտտել ժամանակ, երբ մօտիկից ծանօթանում էի մեր Լոռվայ աշխատաւորներին հետ, ամեն տեղ գիւղացիներին միևնոյն բանն լսել, թէ «մեր երկրում կարգ չկայ, օրէնք չկայ»... Էսօրվայ էս ժողովը պէտք է մեր ժողովրդին տայ էն կարգը, որ նա պահանջում է և իրաւունք ունի պահանջելու, էն օրէնքը, որ Ռուս տանի Մեծ Յեղափոխութիւնը յայտարարել է ու որը պակաս է, շատ և շատ է պակասում մեր երկրին:

Սովը տիրել է մեր երկրին: Դեռ խաղաղ, «եքանելի» ժամանակներում, երբ ալրի փութը մի մանէթ էր, երբ ցորենի թղարը վեց-եօթը մանէթ, Լոռին իր հացը ստացել է դրսից, Ռուսաստանից, որովհետեւ մեր հունձը չի բաւականացել մեզ:

Բայց էսօր մեր զբոսը ինչպէս էլ աւելի է ծանրացել, դժվարա նրա համար, որ մեր բոլոր վարելահողերը չենք կարողացել վ

րել ու ցանել, որովհետեւ էսօր Սադախլօի ու Գեօլագերանի արանքումը խեղտում են մեզ ու չեն թողնում, որ մի քանի գրվանքայ թէկուզ սիմիոնի հաց բերենք մեր քաղցած ընտանիքներին համար կամ սերմացու՝ մեր արտերը ցանելու: Ու զարմանալին էն է, որ մեր հարեան երկու պետութիւնները դեռ իրար գլուխ են կոտրում, իրար մէջ կռվում, թէ Լոռին իրանցն է, նրանց սիրած, չափազանց սիրած երկիրն է ու ձեռքիցը ոչ մի կերպ բաց չեն թողնի: Մենք կարծում էինք, թէ Լոռին որպէս համ հօրից ու համ էլ մօրից սիրված զաւակ՝ թէ Վրաստանի և թէ Հայաստանի կողմից պիտի պաշտպանութիւն գտնէր, զգաւ լինէր, երկուսն էլ մեզ պիտի լսէին ու օգնէին ամեն կերպ, ամեն բանում: Բայց իսկապէս ինչ ենք տեսնում, մեր տէր ու տիրական պետութիւնները անպատիժ ամեն բան կրում-տանում են մեր երկրից, թաւանում մեր Լոռին, առանց մեզ թոյլ տալու փոխարէնը մի բան ներս մտնելու, որակէ ապրանք բերելու:

Ուսումնառած մարդիկ, որոնք հաշվել լաւ դիտեն, ասում են, որ մեր հարեան, մեզ «հովանաւորող» պետութիւնները էս տասն ամսվայ մէջ ինչ գոյութիւն ունի մեր անտէր զօնան, մեր երկրից կրել են մինչև քառասուն միլիօն մանէթի ապրանք ու դրա փոխարէն լօնցին ստացել է միայն հինգ միլիօնի բան:

Էս քանդվելու Սադախլօի ու Գեօլագերանի անարդարութեան, անասովածութեան, թաւանի դէմ (դէ սա ուղղակի թաւան է, ուրիշ ինչ է) պէտք է բողոքենք, անվերջ բողոքենք ու պահանջենք, որ եթէ Լոռվայ համար տամօժնան չեն վերացնում, դէ թող մեր Լոռվայ համար թողնեն գոնէ սերմացու բերելու, որպէսզի ոչ մի թիղ վարելահող էլ անմշակ չմնայ, որպէսզի միջոց տրվի մեր քեռսիք գիւղացուն իր հողը ցանելու: Ու մեր վար ու ցանքսը այնուհետեւ պէտք է կատարենք ոչ թէ էնպէս, ինչպէս միշտ, — անօդնական և յոյսներս դրած աստծու վրայ, որ շատ հեռու է ու մարդկանց գործերին էլ չի խառնում, այլ էնպէս, ոնց որ ուսում առած մարդիկ են ասում, ինչպէս որ (մեզնից շատերը տեսել են) նեմէցներն են վարում ու ցանում հողը: Լոռվայ ամեն գիւղում էսօր կան գերութիւնից եկած շատ գինւորներ, պլէնում եղած սաւղաթներ, որոնք տեսել են թէ աւելի զարգացած աշխատաւոր ժողովուրդները զագրանիցա, արտասահմանում, Եւրոպայում ինչպէս են հողի հետ վարվում. նրանք շատ բան են սովորել ու մեզ շատ բան կարող են սովորեցնել:

Լօռում գիւղատնտեսական օգնութիւն կազմակերպելու մասին մտածող չկայ ու մեր աշխատաւոր ժողովուրդը ինքը պիտի մտածի նրա մասին, որ մեր հունձը կրկնապատկվի, որ մեր արտերը չփչանան, որ մեր հացը մեզ եօլա տանի մի կերպ ու Սահման խօսելու և Քեօլագերանից կանարաբանտ կամ կաշառով հանձնարու մասին քիչ մտածենք:

Մի ուրիշ խնդիր էլ կայ, որ մեր Լօռվայ աղքատ ու աշխատաւոր գիւղացութեան համար հացից ու ջրից պակաս նշանակութիւն չունի. դա—հողի խնդիրն է:

Ռուսաստանի բանւոր-գիւղացիների արիւնով ներկված Մեծ Յեղափոխութիւնը, որ մեզ բոլորիս համար ազատութիւն ու միասնականութիւն ունենայ, աւելի ազդեցիկ լինի թղթի քիչ էլ հաւասարութիւն բերեց, յայտարարեց, թէ՛ հողը—աշխատաւորը և վախենան գիւղացիները) կամ իրանց կողմից մի ինչ-տաւոր գիւղացուն է, թէ միայն նա՛ր ով աշխատում է հողի վրայ, որ խզդատած թուղթ են տվել, «հրաման» են սարքել գիւղի իրատունք ունի էլ հողից օգտւելու, էլ հողի տէրը լինելու...

Մեծ Յեղափոխութեան էս օրէնքը յայտարարվել է, հաստատվել է 1917 թվին, ու էլ օրվանից անցել է ամբողջ երկու տարի, իսկ մեզ մօտ, մեր երկրում դեռ մինչև օրս էլ շահութակվում է պամեշիկների հողատիրութիւնը, ազնվականների և հողատէրերի շահագործութիւնը: Լօռվայ յայտնի տղուկ Մըղարթիցի մի քոստ Մոսնանց Վասիլ մինչև օրս էլ տիրում է հազար հարիւր երեսուն ութ դեսնատին Լօռվայ ամենալաւ տիրութեան, շահագործում է Ռեզենլարի, Մղարթի, Ղաչաղանի, Կոդէսի և ուրիշ շատ գիւղերի աղքատ գիւղացութիւնը, էս գրւխից ստանում եկող տարւան արենդը, էն էլ ինչ տեսակ արենդ... Քեօլի արտն է անում իր տաւարը, ու հնձած արտը մէկէլ նորից արենդով տալիս. մի խօսքով Մոսնանց Վասիլն է, էլի, ով չի ճանաչում նրան, թէ նա ինչ պտուղ է... Թուրք բէգերը—եղիգարովները, Իսրաֆիլ-բէգը մինչև օրս էլ շարունակում են նոյն գործը Քեօլի և Լամբալուի գիւղացութեան հետ... «Բարօն» ֆօն Կոչնեմբալը կամ ֆօն Գօլիբեմեց պամեշիկները—չիմէլ ֆօն են իրանց հարիւրաւոր դեսնատին արօտատեղիներով ծծում են Շահնազարի շրջանի աշխատաւորութեան արիւն-քրտիները...

Էլ էստեղ չեմ յիշում մեր աւելի մանր տղատիկների ու կուլակների—Քալանթարովների, Շահվերդովների, Բաթբեյուքովների և ուրիշների մասին, էն փոքր ազնվականների ու հողատէրերի, որոնք մեծերից պակաս չեն լափում խեղճ գիւղացու աշխատանքն ու գլխին էլ մեծերից աւելի կակալ կոտրում...

Հողային խնդիրը լաւ թէ վատ, բաւարար թէ անբաւարար

(ինձ թւում է թէ շատ վատ ու շատ անբաւարար) «լուծել», աւելի ճիշտ՝ փորձել են լուծել մեր հարեան պետութիւնները: Ենտեղ փորձել են գոնէ խօսքով «կուլել» խոշոր հողատիրութեան դէմ. մեզ մօտ էլ փորձն էլ չի արված ու հողի մասին արգելում են խօսել: Ամեն անգամ երբ Լօռվայ աշխատաւոր գիւղացութիւնը կամեցել է իրականացնել Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան օրէնքը, նվաճումները, երբ ցանկացել է ապստամբել հողային տիրող կարգերի, պամեշիկների արտօնութիւնների, իրաւունքների, Նիկօլայի օրէնքի դէմ,—Ալլահվերդում նստած մեծ ու փոքր պրիստաները պաշտպան են կանգնել հարուստներէս օրվային ազդեցիկ լինի թղթի քիչ էլ հաւասարութիւն բերեց, յայտարարեց, թէ՛ հողը—աշխատաւորը և վախենան գիւղացիները) կամ իրանց կողմից մի ինչ-տաւոր գիւղացուն է, թէ միայն նա՛ր ով աշխատում է հողի վրայ, որ խզդատած թուղթ են տվել, «հրաման» են սարքել գիւղի իրատունք ունի էլ հողից օգտւելու, էլ հողի տէրը լինելու... Ես օրվային և մեծ ժողովը պէտք է վերջ դնի էս ապօրինութեան, էս անարդարութեան ու մեր երկրում իրականացնի հողային էն մեծ օրէնքը, որ մեզ բերեց Ռուսաստանի Յեղափոխութիւնը, էն օրէնքը, որի համար բանւորութիւնն ու գիւղացութիւնը էնքան արիւն է թափել: Լաւ իմացէ՛ք հմ, այ լօռեցիներ, Յեղափոխութեան օրէնքն է՝ հողը—աշխատաւոր գիւղացուն է, հողը—էլ հողի վրայ քրտնողինն է:

Մեր աշխատաւոր գիւղացութիւնը, աղքատ ու շահագործված ռանչպարը աչքերը լաւ պիտի բաց անի, ու ժամանակն է՝ որ վերջապէս բաց անի և տեսնի, թէ օրէնքը, իրատունքը իր կողմն է, թէ հողատէրերն ու պիտէր-պրիստաները խաբել են ու էլ օրէնքը ծածկել են՝ որպէսզի մի քանի տարի էլ աւելի թալանեն նաչար գիւղացուն, որ լաւ չի գիտակցում իր իրաւունքները, չգիտի օրէնքը: Բաց էլ վերջացան-գնացին էլ օրերը: Մենք թոյլ չենք տալ, որ մեզ խաբեն, որ ժողովրդից ծացկեն Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան հողային էլ մեծ նվաճումը, մեծ օրէնքը, մեծ դեկրէտը...

Հիմա դանք էն տուրքերին, խարջերին, որ աղմինխտրացիան մեր գիւղերն ընկած պլէտով հաւաքում է, հն հաւաքում... էդ խարջերին մեր ձորերում ասում են անգլիական խարջեր, որովհետեւ Յեղափոխութիւնից յետոյ մոռացված ու վերացված տուրքերը անգլիացիք հրամայեցին նորից հաւաքել ու ծածով հաւաքեցին:

Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան մեծ գործերից մէկն էլ էն եղաւ, որ սրանից դէնը խարջերը,—գոնէ նրանց մեծ մասը, եթէ ոչ բոլորը—պիտի վճարեն հարուստները, ունեւորները, որ աղքատ ու աշխատաւոր գիւղացու բնւր մի քիչ թիթեւանայ:

Հին ռեֆորմի ժամանակ—դէ բոլորդ էդ բանը շատ լաւ գիտէք—խարջերի մեծ մասը վճարում էր խեղճ ու կրակ բանչաւորը, էն նաչար գիւղացին, որ առաւօտից իրիկուն աշխատում էր ու ինքը շարունակ քաղցած մնում, օր ու գիշեր անքուն բանում էր ու իր քրտինքը ուրիշին տալիս, թաւաղին ու տղորակին ուտացնում: Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնը փոխեց էդ կարգը, նա յայտարարեց, թէ այսուհետեւ ամեն մարդ իր աշխատանքի տէրը պիտի լինի, իսկ խարջերը պիտի վճարեն նրանք, ովքեր առանց աշխատելու՝ աշխատողից լաւ են ապրում, նրանք՝ օվքեր ոյժ ունեն վճարելու, ովքեր ունեւոր, հարուստ են:

Էսօր մեր պահանջն է, ձեր իրաւունքն է որ պահանջէք, որ աղքատը խարջերից ազատ լինի, որ խարջերը դրվին հարստութիւն, կարողութիւն ունեցողների վրայ ու քանի մարդ հարուստ է, էնքան նա շատ խարջ վճարի, մանաւանդ որ չունեւորները, աղքատները խարջ տալու բան էլ չունին, վճարելու միջոց չունին:

Մենք հաւաքվել ենք այստեղ պահանջելու, որ նէյտրալ դոնայում հարկային էնպիսի արդար սխառէմ, ճշմարիտ կարգ հաստատվի, որպիսին էսօր ամեն տեղ պահանջում են բանւորներն ու աշխատաւոր գիւղացիք, և որի համար կատարեց Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնը:

Բայց ժողովուրդը միայն խարջ չը պիտի վճարի, միայն խարջերի թույլին չպիտի անի. նա պէտք է հեռաքրքրվի նաեւ էն հարցով, թէ հաւաքած փողը, վճարած տուրքերը ուր են գնում, անց են ծախսվում ու ով է ծախսողը:

Մեր հարկան պետութիւններում, մենշեվիկների վրաստանում, դաշնակցականների Հայաստանում կամ մուսաֆաթի Ալքրեջանում կան պետական մարմիններ, հասարակական հաստատութիւններ, որոնք պարլամենտ կամ հիմնադիր ժողով են կոչ-

մ, աւելի առաջադէմ, զարգացած երկրում—Ռուսաստանում, ծ Յեղափոխութեան էդ սիրուն հայրենիքում, կան Բանւորական և Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդներ. էդ մարմների առաջ հաշիւ է տրվում ծախսած ժողովրդական գումարի մասին:

Էս մեր նէյտրալ թէ անտէր դոնում ոչ հաշիւ տուող կայ և էլ պահանջող: Մեր Լօսում չկայ մի հասարակական մարմին, ժողովրդական հաստատութիւն, որի առաջ իրանց պատասխանազգան էս իրկբի տէրերը, որի առաջ հաշիւ տան ու ժողորդն էլ իմանայ թէ էն ծախքերը, որ կատարվում են, հարոն է կատարել՝ թէ դուր է, աւելորդ, լսի՝ թէ ժողովրդի ջապլէտով հանած արիւնքրտինքը ինչպէս է քամու կամ ջրի լում: Էսօրվայ էս նշանաւոր ժողովը պէտք է ստեղծի մեր ում մի հասարակական մարմին, ժողովրդից ընտրված մի լմակերպութիւն, որի առաջ հաշիւ տրվի ժողովրդական կանխերի համար:

Մեր Լօսին մի ուրիշ մեծ ցաւ էլ ունի, մի ցաւ, որի դէմ ան անգամ բողոքել են ու բան չի դուրս եկել: Էդ ցաւը—անվերդին է, մեր աղմինխտրացիան է:

Երբ ես շրջում էի մեր Լօսվայ գիւղերն ու խօսում ժողորհի հետ, ծանօթանում նրա կարիքների հետ, քացաւորում մեր յվայ ժողովի նշանակութիւնը, տեղական ինքնավարութեան բաժնիշտութիւնը, թէ ինչ է զէմսովօն և ինչ ծրագրեր ուր, թէ ինչ պիտի անել, որ ժողովուրդը էս նեղ դրութիւնից աս գայ, որ կանոնաւորի պարենաւորման, դպրոցական, արադատութեան, հարկի և այլ խնդիրները, ամեն տեղ ես յն մի բան էի լսում:

—Մենք ոչինչ չենք ուղում քաղցին էլ կը դիմանանք, խարին էլ, միայն ի սէր աստծոյ աղատեցէք մեզ էս անիծած եցիականներից, էդ անիրաւ աղմինխտրացիայից. մեզ կերան դեցին, թալանեցին...

Լօսվայ ամբողջ ժողովրդի աղաղակն է, էդ բողոք է էն գերի, էն «օրէնքներ» դէմ, որ տիրում են մեր երկրում շնորհող ու աւաղակ, կաշառակեր ու թալանչի մեծ ու փոքր ստաւանների ու պիսերների...

Հին ռեֆորմում, բռնապետութեան ամենավատ օրերում էս ում աւելի կարգ ու կանոն է եղել, քան էսօր: Էն ժամանակ ծեւական կերպով, աչքի համար պահում էին «օրէնքի պաւ», գոնէ ամաչում ու քաշում էին իրանց արածներից: Էսօր

ափ-աշկարայ, օրը ցերեկով, մի ուսմկա մեղրի համար, մի քան
գրվանքայ իւղի կամ պանրի խաթեր ամենածանր յանցանքներ
անգամ անպատիժ են մնում: Ժողովուրդը փախչում է, խուսա-
փում Ալլահվերդուց: Նա աշխատում է իր ձեռքով վերջացնել գո-
ղի ու աւագակի հետ իր հաշիւները, իսկ գողերն ու աւագակ-
ները ձգտում են մի կերպ իրանց գործը Ալլահվերդի գցել, պրիւ-
տաւ-պիսէրի մօտ տանել՝ անպատիժ մնալու համար:

Երկու օրինակ բերեմ թէ սպանութիւնն ու թալանը ինչ պիտի չափեր են ստացել: Հալրատ գիւղում մի ամսվայ մէջ կատարվում է չորսօճինգ սպանութիւն. ասինք թէ սպանողները անյայտ մարդիկ են. խայց պրիստաւը (կամ թէկուզ գլավինը) նեղութիւն անգամ չի կրում եղ գիւղը գնալու, գոնէ մի հասարակ «պրատակօյ» կազմելու: Մի ուրիշ դէպք:

Օրը ցերեկով Ալանգերգում բոլորի քթի տակից քշում տանում էն գլխաւոր կամխաւրնների ձիաները—ու եղ աւաղակ կամի սարիատը չի կարողանում իր ապրանքի գողերին գտնել. դէ նա խնչպէս պէտք է գտնի Լօովայ մի խուլ անկիւնում ընկած գիւղ մի խեղճ ու կրակ նաչարի գողին ու թալանչուն...

Առաջվայ, հին ուժերի կոթին, որ իր մէջ ունէր նաև Զաւալ-Օղլու և տեղի շրջանները, կառավարվում էր մի պրիստաւով ու մի տաս-տասնուհինգ չափաբներով: Էսօր մենք ունենաւմերիկացի կամ անգլիացի մի հատ զենեալ-գոլքերնատոր, երկու «գլխաւոր»-կամխարներ, (Ալլահլիբըղում), երեք հատ ուսյօնն պրիստաւ՝ Շնողում, Ուզունլարում և Վորոնցովկայում, երեք հատ էսքանց օգնական պրիստաւներ—մի խօսքով իննը նաչալնիկ ու հարիւրից աւելի միլիցիօնէր: Ու հարիւր անգամ էսօր աւելի էն մարդ սպանում, աւելի գողանում ու թախանում...

Սրա ճարրը որն է...

Մի ճար կայ միայն և դուք բոլորդ էգ ճարր գիտէք:

Մեր երկրում էն ժամանակ գողութիւնն ու աւաղակութիւնը կը վերանայ, երբ էս պալիցիան չի լինի, երբ ժողովուրդը ինքը կըսկսի կռիւլ էդ չարիքները դէմ, երբ ազմինիստորացիան

Ժողովուրդի ձեռքին:

Ու էլ զքան փշացած, գող ու աւազակ աղմուկի տրագիան է որ միաժամանակ կատարում է արդարադատութեան գործը, է պրիստաւներն ու պիսէրներն են, որ պէտք է դատեն արդարի ու մեղաւորին:

Հին ռեժիմում լուսեցին երբ քանդատ ունէր, գնում էր Շու
լավէր կամ Զաւալ-օղլի, դիմում էր էտեղի միրովոյ սուղի
հաշտարար դատաւորին: Երբ մի սպանութիւն էր լինում մե
երկրում, վազում գալիս էր սլեդովատէլլ, քննիչը, ու արդարա
դատութեան գործը կատարվում էր էն ժամանակվայ լաւ թ
վատ օրէնքի համաձայն: Էսօր քննողն էլ, օրէնքն էլ, դատաստ
կարողն էլ, հրամայողն ու կատարողն էլ միեւնոյն մարդն է, ե
րէկվայ կաշառակեր ու կլեռուզնիկ պիսէրը կամ առաջվայ գո
պրիստաւը, որ էսօր աւելի ազատ ու անաժօթաբար է թալա
նում խեղճ ու անօգնական ժողովրդին, քան հին ռեժիմի օրե
րին:

Էս նշանաւոր ժողովը պիտի կազմակերպի, կանոնաւոր
նաև արգարադատութեան գործը, հրաւիրի պատրաստի ու փորձ
ված դատաւոր ու քննիչ, որոնք բարձր կը պահեն դատաւորի
դատարանի պատիւը:

Էդ անտէր Ալլահվերդու ձեռքումն է նաև Սեր երկրի կրթական-կուրտուրական գործը. պրիստաֆներն են, որոնք կառավարողն են մեր զարդները, հրամաններ տալիս, թէ՛ հնց պէտք տանել մեր մատաղ սերնդի դաստիարակութեան գործը:

Սա աշխարհում չտեսնված մի բան է։ Ու զարմանալու չի որ մի պրիստավի աչքում հասարակ մեղիցիոնիերի արժեքն իսկ չունի դպրոցի դեկավարը, գիղական ուսուցիչը, որոնց ամիսներու առձիկ չեն տալիս, կամ տված ռոճիկը (ամսական 1.000 բ.) չհամարում մի մելիցիոնիերի ամսականին անգամ (1.400 բ.) մի կողմը թողնենք էն բոլոր ալիւրն ու շորեղէնը, որ առատորէ ստանում է մելիցիան։

Դպրոցական գործը անկարելի է աղյուցիականների ձեռքին
թողնել: Ու էսօրվայ էս մեծ ժողովը պէտք է ասի, թե մեր Լոս-
վայ կրթական կոլտուրական գործի ամբողջ ղեկավարութիւնը
համ ձեռքին պիտի լինի, համ է նա վստահում:

Ուղղում եմ մի քանի խօսք էլ ասել զէմստովոյի մասին, որը

անունը առաջին անգամն է տրվում մեր ձորերում, որի մասին առանձին աւելի մանրամասն կըխօսենք: Ձէմստվօն տեղական ինքնավարութիւնն է: Եղպէս էր կոչվում գաւառական կամ նահանգական տեղական ինքնավարութեան մարմինը հին Ռուսաստանում: Յիդափոխական Ռուսաստանում էսօր նա կրում է Գիւղացիական Խորհուրդ, Գործադիր Մարմին անունները:

Արտասահմանում նրանք ուրիշ անուններ ունեն: Տեղական ինքնավարութեան գաղափարը ամբողջ պատմութիւնն ու անցեալ ունի: Բայց մեզ էսօր զէմստվօն պատմութիւնը կամ անունը չի հետաքրքրում. այլ նրա էութիւնը:

Խնդիրը նրանումն է, որ ամեն մի նահանգի, գաւառի, վոյստի ժողովուրդը իրաւունք ունի ժողովիկու, ի հարկէ իր ներկայացուցիչներին միջոցով, և իր դարձերի մասին մտածելու: Ահա գիւղացիների ներկայացուցիչներին էդ ժողովը, որ կոչվում է զէմսկի ձայնատուների խորհուրդ, իր ցաւերի մասին խօսելուց յետոյ, ընտրում է վարչական մարմին, որը ժողովրդի որոշումները իրականացնի, նրա կամքը կատարի: Եղ մարմինը կոչվում է՝ զէմսկի ուպրավա, զէմսովային վարչութիւն:

Էնտեղ, ուր տեղական ինքնավարութեան գաղափարը խորը արմատներ է գցել, մի զէմստվօն սահմաններում ոչինչ չի կարող կատարվել առանց տեղական էդ հասարակական մարմնի մասնակցութիւն, որովհետեւ զէմստվօն ոչ միայն տեղական իշխանութեան կրողն է, այլև կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչը տեղումը. կենտրոնական իշխանութեան ամեն կարգադրութիւն կարող է իրագործվել միայն օրէնքի սահմաններում, միայն էն չափով, որ չափով նա չի հակասում, հակառակ չի օրէնքին:

Ձէմստվօնի ձեռքին է նաև խարջերի ինչպէս հաւաքելու, նոյնպէս և ծախսելու ամբողջ իրաւունքը:

Ձէմստվօն—այսինքն ժողովրդին է հպատակվում նաև ամբողջ ադմինիստրացիան, էն անդմինիստրացիան, որ ձեր գլխին կատարեալ ցաւ է դարձել ու էնքան օյիններ է խաղում:

Պարզ է նոյնպէս, որ զէմստվօն է լինելու ղեկավարը կըրթական-կուլտուրական և պարենաւորման կարիքների. նա է կազմակերպելու նաև ժողովրդական արգարադատութեան գործը:

Ես գիտեմ, որ ձեր բախտի տէրը դուք չէք, և տեղական ինքնավարութեան գաղափարը իրականացնելը, զէմստվօ հաստատ

տելը ձեզնից չի կախած. բայց չկայ պատճառ, որ ձեզ արգելեն կատարել մի գործ, ինչ իրանց մօտ թոյլատրելի է: Իսկ եթէ կարգելեն մեզ զէմստվօ մտցնել, թող արգելեն—մենք մեր կողմից կաշխատենք ամեն կերպ էն իրականացնել, պաշտպանել մեր իրաւունքները: Ես թվեցի էն բոլոր խնդիրները, սրոնց մասին մենք էսօր պէտք է մտածենք: Որպէսզի մեր պահանջները, լօռվայ աշխատաւոր ժողովրդի էս մեծ ժողովի, Գիւղացիական Խորհրդի կամքը օր առաջ իրականանայ ու մենք գեղեցիկ, լաւ խօսքերից յետոյ գործի անցնենք, ու ցոյց տանք, որ մենք վճռել ենք—ինչ ուզում է լինի—էս զրութիւնից դուրս գալ ու մեր ասածները անել, էս մեծ ժողովը՝ իր աշխատանքի վերջը՝ կընտրի մի Գործադիր Մարմին, որը ձեր որոշումները իրագործի, ձեր կամքի կատարողը լինի և ձեր առաջ պատասխանատու: Լօռվայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւորների Խորհրդի Գործադիր Մարմինը, որ կը վայելի ձեր վստահութիւնը, հաւատը մինչև վերջ պատվով կը կատարի իր պարտքը:

Ես վերջացրի իմ խօսքս. բայց, սիրելի լօռեցիներ, ուզում եմ նախազգուշացնել ձեզ, որ մեր հակառակորդները, ժողովրդի թշնամիները (մենք հակառակորդներ ու թշնամիներ էլ ունենք) կաշխատեն պղտորել ձեր մտքերը, ձեր մէջ խառնակչութիւն գցել, թէ մենք հրաւիրել ենք ձեզ էստեղ չդիտեմ ինչ գործի համար: Ձը խարվէք նրանցից, ձեր ցանկութիւնը, մեր ուզածը ժողովրդի կամքը միայն մի բան է.

—Հանել էս անմխիթար վիճակից մեր երկիրը, էս անտէր զօնան...

—Վերջ տալ մեր չորս կողմը աիրող էն անարդարութիւններին ու խայտառակութիւններին, որոնց մէջ մենք խեղտվում ենք...

Մենք մի ցանկութիւն, մի պահանջ ունենք միայն—հաստատել մեր երկրում օրէնքը, էն օրէնքը, որի համար բանաւոր-գիւղացի ժողովուրդը էնքան տանջվել է ու արիւն թափել, էն օրէնքը՝ որի համար կատարվեց Ռուսաստանի Մեծ Յիդափոխութիւնը:

Շնորհի ներկայացուցիչ.

—Տայ աստված, որ ինչպէս տաք-տաք ու սրտով խօսում էք, էնպէս էլ տաք ու սրտով գործի կըպչէք և մեր անտէր երկրին մի ճար անէք:

Նախազան—Ընկեր Սուրէն Երզնկեանի գեկուցումը, որ այն-

պիսի ուշադրութեամբ լսեցինք բոլորս, միայն ընդհանուր գծերով շոշափեց այն բոլոր հարցերը, որոնցից իւրաքանչիւրի մասին ձեր ուշադրութեան կը ներկայացնեն յատուկ զեկուցումներ: Օրակարգի երկրորդ կէտն է՝ «Գիւղատնտեսական օգնութեան խնդիրը»:

Նախագահութիւնը Աշոտ Աթանասեանից անցնում է Սարգիս Զուրաբեանին:

Ա. Աթանասեան. — Ես շրջել եմ Լոռին հինգ-տասը տասնհինգ տարի առաջ որպէս գիւղատնտես, և տեսել, որ Լոռին շատ հարուստ բնութիւն ունի, բայց շատ խեղճ կեանք: Ցաւն այն է, որ մեր գիւղացին անում է այն, ինչ չպիտի անի և չի անում այն՝ ինչ պէտք է անի, ինչ իրան ձեռնատու է: Լոռու դիրքը բարձր է, տափարակ, հիանալի օդ ու ջուր և կլիման միանգամայն համապատասխանում է անասնապահութեան համար: Լաւ տեսակի և վատ տեսակի պահած ոչխարի օգուտը շատ աւելի մէծ է, քան բանրակիինը. պէտք է պահել բրդոտ տեսակի ոչխար, օրինակ՝ մէլէնոսի ոչխարի տեսակը: Սրանից տասն տարի առաջ Վօրօնցովկայի շրջանում պահում էին մէքէնոսի ոչխարներ: Բացի բրդոտ ոչխարից, պէտք է պահել տաւար: Լաւ տեսակի, զաւօղի — մալականի կովը օրական տալիս է մէկուկէս-երկու փոթ կաթ, մինչդեռ մեր հասարակ կովերը տասնհինգ բաժակ: Սյա վերջին հանգամանքը ի նկատի ունենալով է, որ շվէցարացիները ուղէլի շրջանը բերին ընտիր տեսակի ցուլեր, բուդաներ և աղնվացրին տեսակը, զաւօղի կովեր ստացան:

Լոռվայ անտառները, ծաղիկները և ջրերը միանգամայն համապատասխանում են մեղաբաժութեան և այդ ցոյց տվեց այս տարվայ բերքը: Լոռին, եթէ պարապի կանոնաւոր անասնապահութեամբ և մեղաբուծութեամբ, նրա դրութիւնը շատ աւելի լաւ կը լինի, քան հիմա: Բայց որովհետեւ հացը Լոռում միշտ պակաս է եղել և ստացվել է Ռուսաստանից, դրա համար էլ մեր ժողովուրդը անասնապահութիւնն ու մեղաբուծութիւնը թողել և երկրագործութեամբ է զբաղվել: Թէև դուք ձեր հողերը աղբել էք, բայց սերմացու չունէք, որ ցանէք: Այն գործադիր մարմինը, որի մասին խօսեց ձեզ ընկ. Սուրէնը, պէտք է հարկաւոր դիմումները անէ հարկան պետութիւններին հացի և սերմացուի մասին: Ճանապարհորդելիս Լոռում նկատեցի, որ ժողովրդի տրամադրութիւնը ընկած է: Մի ցաւ էլ կայ — այդ այն է, որ մի-եր-

կու աւսվայ ընթացքում Վօրօնցովկայի շրջանում չունան ջնջել է հազար չորս հարիւր գլուխ խոշոր եղջիւրաւոր անասուն, որով հանգին՝ մօտ հինգ միլլիօն վնաս է տւել Լոռուն: Վօրօնցովկան միայն ինքը դիմեց հայոց կառավարութեան, որը և ուղարկեց վէտէրինարներ, որոնք այդ ցաւի դէմն առան, սրսկեցին հակա-ժանտախտային շիջուկ հազար ութհարիւր ութսուն գլուխ տաւարի՝ որից յետոյ զգալի կերպով պակասեց անասունների մահացութիւնը: Բայց այդ ցաւը միայն վօրօնցովկայի շրջանումը չէ տարածված. միւս բայօններում էլ մեծ է տաւարի կորուստը ժանտախտից: Ձեր ապագայ Գործադիր Մարմինը կը դիմի հարկաւոր միջոցների կազմակերպելու ժանտախտի դէմ կովելու գործը և ազատելու Լոռին այդ պատուհասից: Եթէ մեր տաւարը պատվաստելուց յետոյ հիւանդութիւնը գայ, դիպչի տաւարին, կորուստը շատ չնչին կը լինի:

Ինձ, որպէս գիւղատնտեսի համար, աւելի պարզ են ժողովրդի կարիքները և այդ պատճառով անհրաժեշտ է, որ Լոռին ունենայ հարկաւոր թվով պատրաստած մարդիկ, ծանօթ անասնապահութեան, մեղվաբանութեան, այգեգործութեան, անասնաբուծութեան հետ, որոնք սովորեցնեն մեր գիւղացուն վարել իրանց տնտեսութիւնը այնպէս, ինչպէս թելադրում է գիտութիւնը և ինչպէս վարում են կուլտուրական երկրներում:

Դ. Յակոբեան. — (Ուղունլարի ռայօնի կօմիսար). — Փոխանակ տաք տաք խօսելու, աւելի լաւ կը լինէր այժմ ընտրել Գործադիր Մարմինը. գիւղացիները չեն կարող իրանց գործերը թողնել և երկար ժամանակ նստել: Ընկ. Սուրէն Երզնկեանը իր զեկուցման մէջ ասաց, որ Հաղթաթ գիւղում մի ամսում չորս սպանութիւն է եղել և ոչ մի արձանագրութիւն չի կազմվել: Ճիշտ է, մի ամսում եղել են չորս սպանվածներ, չեմ արդարացնում. բայց արձանագրութիւններ չը կազմելու համար թող գայ ինձ մօտ և ես ցոյց կը տամ բոլորի արձանագրութիւնները: Ես բողոքում եմ ընկ. Սուրէն Երզնկեանի այդ զրպարտութեան դէմ և առաջարկում եմ ժողովրդին աչկակապութիւնների վրայ ուշադրութիւն չը դարձնել:

Ա. Աթանասեան (զեկուցանող). — Նախ ժողովուրդը պէտք է հասկանայ թէ ինչու է հաւաքվել այստեղ և ինչ է դէմստվօն, և ապա անցնի ընտրութիւններին: Գիւղացիական ներկայացուցիչները պէտք է նախ իրազէկ լինեն և յետոյ ընտրեն: Մի օր մնալով՝ նրանք իրանց գործին ամենեւին չեն մնասի:

Սուրեն Նրզնկեան.— Էս ժողովը ամենանշանաւոր ու հեղինակաւոր ժողովն է, որ երբեք գումարովել է Լոռում: Լոռվայ աշխատաւոր գիւղացիութեան ներկայացուցիչները հաւաքովել են էստեղ իրանց երկրի անմխիթար դրութեան մասին մտածելու, մասնաւորապէս քննադատելու ադմինիստրացիայի անօրէնութիւններն ու խարդախութիւնները և ոչ թէ լսելու էղ ադմինիստրացիայի խրատները... «Մտացաւ» ադմինիստրացիան մեզ «խորհուրդ» է տալիս շուտով ցրվել մեր ամերը: Ի՞նչու... Դէ մենք բոլորս էլ հասկանում ենք թէ ինչու, մենք բոլորս էլ լաւ գիտենք ադմինիստրացիայի խրատների արժէքը... Բայց մենք պէտք է մնանք և պատմենք պալիցիայի արարքները, ինչքան էլ էղ դուր չը գայ Ալլահվերդուն: Միլիցիայի ներկայացուցիչը շատ է նեղացել իմ ասածներիցը, թէ մեր սարերում ու ձորերում անպատիժ սպանութիւններ են կատարվում, թէ ադմինիստրացիան չի հետաքրքրվում սպանածներով, չի կռվում սպանութիւնների դէմ:

Տանը նստած «պրօտօկօլ» կազմել սպանութիւնների, էս կամ էն գիւղում կատարվածի մասին, դեռ չի նշանակում թէ օրինական արձանագրութիւն կազմել, կատարել իր պաշտօնը կամ կռվել աւազակութիւնների դէմ: Ադմինիստրացիայի էստեղ ասածները հաստատում են մի աւելորդ աղբամ, թէ ինչքան վատ է ըմբռնում իր պարտականութիւնները Լոռվայ ադմինիստրացիան, ինչքան քիչ է նա պատրաստ իր պատասխանատու գործը վարելու համար: Ինձ համար անձնական խնդիր չկայ ներկայ հարցում: Թող ինքը ադմինիստրացիայի էստեղ նստած ներկայացուցիչը ձեռքը իր կրծքի վրայ դնի և ասի Լոռվայ ժողովրդի ներկայացուցիչների առաջ՝ թէ միլիցիան—ադմինիստրացիան բարեխիղճ կերպով կատարել է իր պարտականութիւնները, թէ նա իր կոչման բարձրութեան վրայ է կանգնած: Բայց նա չի յամարձակվի էղ բանն անել: Գալով «աչքակապութեան»... Բայց աւելի լաւ է էղ մասին չըխօսենք, ամբողջ Լոռին լաւ է ճանաչում մեզ էլ, ձեզ էլ, ադմինիստրացիայի բոլոր պիսէ-պրիտաւներին և շատ լաւ գիտի իսկական աչքակապների անունները: (Բուն ծափահարութիւններ):

Արամայիս Նրզնկեան.— Առաջարկում եմ ժողովականներին չցրվել մինչև վաղը և օրակարգը չը խախտել: Այս դրութիւնը հետեւանք է Լոռվայ ընդհանուր դրութեան: Ադմինիստրացիայի մէջ կարող

են պատահել անհատներ, որոնք և գուցէ կատարում են իրանց պարտքը բարեխիղճօրէն, բայց անհատները ինչքան էլ աշխատեն ընդհանուր դրութիւնը բարձրացնել, նրանք չեն կարող: Զուր է կօմիսար Դանէլը նեղանում կամ իր հաշիւն ընդանում այստեղ ասածները:

Ա. Աթանասեան (գեկուցանող).— Ես կը կարգամ գիւղատընտեսական օգնութեան մասին առաջարկված բանաձևը.

— Լոռվայ նէյարալ զօնայի Գիւղացիական ներկայացուցիչների Խորհուրդը, գումարված ներկայ գեկտեմբերի 14-ին Ուզունլարում, լսելով գիւղատնտես Աշոտ Աթանասեանի գեկուցումը Լոռում գիւղատնտեսական օգնութիւն կազմակերպելու մասին, որոշեց.

1. Յանձնարարել իր Գործադիր Մարմինն ձեռք առնել ամեն միջոց ներկայ գարնանացանքսի համար հայթայթելու սերմացու, դիմելով այդ մասին Հայաստանի և Վրաստանի կառավարութիւններին, ինչպէս նաև Ամերիկական Մերձաւոր Արեւելքի Նպաստից Մասնաժողովին.

2. Դիմել նոյն կառավարութիւններին ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպելու նէյարալ զօնայի անասնաբուժական օգնութիւնը, մասնաւորապէս խոշոր եղջիւրաւոր անասունների ժանտախտի դէմ պատվաստելու գործը.

3. Լոռվայ գիւղատնտեսական կարիքների համար հրաւիրել առնւազն մի գիւղատնտես—ինստրուկտոր:

Նախագահ.— Եթէ առաջարկված բանաձևի դէմ առարկութիւն չկայ, ապա ես կըղենմ այն քվէարկութեան:

Բանաձևը ընդունվում է: Ժողովի նախագահութիւնը անցնում է Ա. Աթանասեանին:

Նախագահ.— Խօսքը պատկանում է ընկ. բժիշկ Մելիք-Գրիգորեանին «Բժշկական օգնութեան հարցի» մասին գեկուցանելու համար:

Բժ. Գ. Մէլիք-Գրիգորեան.— Բժշկական օգնութիւնը Լոռվայ զօնայում որոշ չափով կազմակերպել էր աղբային խորհուրդը: Բժիշկը իր օգնականներով աշխատել է որքան կարելի է, օգնութիւն հասցնել ժողովրդին: Եղել են թիւրիմացութիւններ, անբաւարար է եղել օգնութիւնը, բայց այդ պատահել է բժշկական պէրսօնալից անկախ պատճառներով: Արվել է այն, ինչ հնարաւոր է եղել անել տված պայմաններում:

Հին ռեփիմում Լոռին ամենևին զրկված է եղել բժշկա-սանիտարական բարիքներից: Կառավարութիւնը բոլորովին չէ մտածել բժշկական օգնութեան մասին: Զաւալ-օղիւմ եղել է մասնաւոր բժիշկի, Վօրօնցովկայում մի ֆէլդշեր, մի բժիշկ եկատերինէն-ֆէլդ—Շուլավէրի շրջանում՝ աւելի շուտ սպանութեան դէպքերին բժշկական արձանագրութիւններ կազմելու: մի բժիշկ և մի ֆէլդշեր Ալահվերդում հանքային գործարանի համար: Կառավարութիւնը աշխատում էր մի կերպ եօլա տանել գործը:

Հարուստները միշտ հնարաւորութիւն են ունեցել օգտվել յիշեալ կէտերի բժշկական օգնութիւնից, կամ նոյնիսկ թիֆլիսից: Իսկ խեղճ ժողովուրդը, որ միջոց չի ունեցել վճարելու բժշկութեան հետ կապված համեմատաբար զգալի ծախքերը, թողնված է եղել իր բախտին:

Յեղափոխութիւնից յետոյ բժշկական օգնութեան խնդիրը աւելի սրվեց, մանաւանդ երբ Անդրկովկասը կտրվեց Յեղափոխական Ռուսաստանից և առաջ եկան իրարից անկախ, իրար թշնամի մասն ազգայնական պետութիւններ: Մեր այս «անտէր զօնալուծ» մնացել էր մի ֆէլդշեր, որ ոչինչ չէր կարող անել: Վրաստանի հայոց ազգային խորհուրդը օգնութեան եկաւ ուղարկելով այլ շրջանը երկու բժշկա-սանիտարական խմբեր: Առաջին խումբը Սանահում էր մարտից մինչև դեկտեմբերը, բայց ժողովրդի կարիքը այնքան մեծ էր, որ խումբը չէր կարողանում ժամանակի պակասութեան և տարածութիւն հեռաւորութեան պատճառով ըստ ամենայնի օգնութեան դալ: Այս բանը ի նկատի ունենալով ազգային խորհուրդը ուղարկեց երկրորդ բժշկական խումբը Ուզունլարի շրջանի համար, որը գործեց յուլիսից մինչև դեկտեմբերը:

Մի փոքր աւելի մօտ ծանօթանանք Լոռվայ բժշկա-սանիտարական խմբի կատարած գործի հետ: Ամառը կային երէք տեսակի տիֆ, սիբիրական ախտ (сибирская язва) և այլ տարափոխիկ հիւանդութիւններ: Այդ հիւանդութիւնները անցնալ ձմեռ հնձում էին անհաշիւ թւով զօհեր և ազգ: խորհրդի ուղարկված երկու բժշկական խմբերը հնարաւորութեան սահմաններում հասցրել են օգնութիւն (ժողովականներից — ճիշտ է, մեծ օգնութիւն են հասցրել, շնորհակալ ենք): Սակայն սօցիալական պայմանները չեն ներել մեզ հարկաւոր չափով օգտակար լինել, որովհետեւ բժշկական օգնութիւնը դժվարացել է — 1) հացի պակա-

սութեան պատճառով: մարդիկ քաղցած են՝ օրգանիզմը թուլացած և աւելի ենթակայ ամեն տեսակ տկարութեան: — 2) շորերի, փոխնորդի բացակայութիւնը, — ինչպէս նաև 3) ընտանիքների, խրճիթների հակա-առողջապահական վիճակը մեծ խոչնդոտ է մեր գործում: Դժվար է այդ պայմաններում չըվարակվել և չը վարակել չորս կողմը: Ընդհանրապէս դիւղական անկուտուրական կեանքը մեծ դեր է կատարում բժշկա-սանիտարական օգնութեան գործում — չկայ բաղանիք, չկայ սուպօն, — և հակառակ կլիմայական բարեխաջող պայմանների, ժողովուրդը շատ վատաբող է, թոքախտը բաւական տարածած: Դիւղերումը առողջ երեխաներ գրեթէ չկան:

Ազգային խորհուրդը միայն փոքր չափով, ներած միջոցների սահմաններում կազմակերպեց գործը և այն էլ ժամանակաւորապէս: Դեկտեմբերին արդէն փակւելու են երկու բժշկա-սանիտարական խմբերը և Լոռվայ ազգաբնակչութիւնը զրկվելու է այն չնչին օգնութիւնից ևս, որ լաւ թէ վատ ստացել է այս վերջին ամիսներին: Այն մարմինը, որ դուք կընտրէք, պէտք է կազմակերպի բժշկական օգնութիւնը աւելի լայն կերպով, դէմստօյական ձևով: Բայց որովհետեւ մենք ապրում ենք յեղափոխական շրջանում, պէտք է բժշկա-սանիտարական գործին աւելի զարկ տանք, աւելի զարգացնենք, մտածենք յատկապէս թոքախտաւորների, երեխաների, վեներական հիւանդների մասին: Պէտք է նկատեմ, որ վերջինների թիւը կարծածից շատ աւելի մեծ է գիւղերում:

Առաջարկում եմ նէյտրալ զօնան բաժանել երեք բժշկական շրջանների — 1) Շնողի, 2) Ուզունլարի և 3) Վօրօնցովկայի, համաձայն ազմինիստրատիւ բաժանման: Ամեն մի շրջանում առայժմ պահել ամբուլատորիաներ իր բժշկական խմբերով:

Սուրէն Նրզնկեան. — Վրաստանի հայոց ազգային խորհուրդը, մի քանի ամիս բժշկական օգնութիւն տալուց յետոյ, որոշել է լիքվիզացիայի ենթարկել երկու բժշկա-սանիտարական խմբերը, որոնց պահելու համար նրան պակասում են նիւթական միջոցներ: Բայց Լոռվայ գիւղացիութիւնը, որը արդէ՛ւ ճաշակեց օգնութեան բարիքները և գիտակցում է նրա անհրաժեշտութիւնը, չի կարող թոյլ տալ, որ իր ամբողջ շրջանը մնայ առանց բժշկական օգնութեան: մասնաւորապէս Ուզունլարի հասարակութիւնը թոյլ չի տայ իր սիրելի բժշկին հեռանալ էստեղից:

Մենք էստեղ էսօր ևեթ պէտք է վճենք, որ ազգային

խորհրդի լուծված, լիքվիդացիա արած բժշկական խմբերը մնում են և նրանց գոյութեան համար անհրաժեշտ միջոցներ յայթաթելու պարտականութիւնը թողնենք էն Գործադիր Մարմին, որ մենք կենտրոնէք մեր աշխատանքների վերջը Ընկեր բժիշկ առաջարկեց բժշկական երեք կենտրոն ստեղծել. որպէսզի և ուղղութեամբ էլ մի գործ կատարած լինենք, անհրաժեշտ է որոշել, որ Սանահնի բժշկական խումբը և ղեկատուներ տեղափոխեն Շնող գիւղը:

Բժշկա-սանիտարական խմբի Սանահնից — Շնող տեղափոխելը անհրաժեշտ է ոչ միայն նրա համար, որ Սանահնը մի փոքրիկ գիւղ է, հազիւ մի հարիւր տանից բաղկացած, մտիկ Ալան վերդու գործարանի ֆելդշերից և ղեկաւորից, իսկ Շնողը — բայնական աղմկի սարահանդէս կենտրոն, վեց-եօթ հարիւր տանի կազմած մի մեծ գիւղ. — ոչ միայն նրա համար, որ բժիշկ էնտեղ մեծ ասպարէզ ունի օգտակար լինելու բժշկական խումբ պէտքէ տեղափոխել նաև նրա համար, որ բժիշկի Շնող փոխադրելը կունենայ նաև կուլտուրական նշանակութիւն Շնող շրջանի ամբողջ ազգաբնակչութեան համար: Խնդիրը նրանումն է, որ երբ ես Շնող գիւղն էի գնացել Լոռվայ նէյտրալ գոնայի կարիքների հետ ծանօթանալու, էնտեղ տեսայ, պատահեցի մի ջանաւոր, վիթխարի մարդու, շէկաւուն միրուքով, երկար սև շորով — որին քաղաքացիք Փրակ են ասում, — մի երկար-արշինանոց տէր ողորմեան ձեռքին... Ես մեր գիւղերին ու մարդկանց լաւ ծանօթ եմ. տեսայ որ (ընդհանուր ծիծաղ, ձայներ — դա՛ տիրացում է, Շնողնայ դոխտուրը...) նա ինչ որ ուրիշ տեսակի մարդ է, Նոէլ էլ, էդ անծանօթ ջանավարը կարծես հասկացաւ ինձ. զգաց, որ մենք իրար թշնամի պիտի լինենք ու մենք քանի իրարից հեռանում էինք, Լնքան շուտ-շուտ յետ էինք նայում, իրար տնդողում իրար դիտում... Ուզում էինք իրար մի լաւ տեսնել, որ իրար չը մօտանանք: Ես գոնէ նրան երբէք չեմ մոռանայ...

Բանից դուրս եկաւ, որ դա — Շնողնայ շրջանի յայտնի ձեռքի է, կախարդն է, որը ամեն մի տէրողորմեայ քցելիս, ասում են, մի հիւանդ է փրկում... Սանահնից որ Շնող տեղափոխենք մեր բժշկական խումբը՝ վերջ կրտովի նաև բժշկական շառլատանութեան և գիւղացիք կըտեսնեն թէ ինչ ասել է բժշկութիւն, կըսիրեն իրանց բժիշկին, ինչպէս որ էդ պատահեց Ուզունլարում կըսիրեն լոյսը, գիտութիւնը:

Ս. Զուրաբեան. — Ազգային խորհրդի տված օգուտն այն է եղել, որ Ուզունլարի հասարակութիւնը լուսաւորվել է այն տեսակ մարդկանցից, որոնցից մէկի մասին խօսեց ընկ. Սուբէնը և որպիսիները շատ կան մեր գիւղերում: Ուզունլարի հասարակութիւնը այն եզրակացութեան է եկել, որ բժիշկը անհրաժեշտ է գիւղին և թէև ազգային խորհուրդը որոշել է լիկվիդացիայի ենթարկել բժշկական պունկտը, բայց Ուզունլարի հասարակութիւնը պրիզովորով վճռել է պահել բժիշկին և շատ աւելի արդար վաթճաթել, քան ազգային խորհուրդը:

Արամայիս Նրզնկեան. — Բժշկական խմբերը ուղարկվել են ժամանակաւորապէս պետութիւնների բանակցութիւնների շրջանում, երբ կարծւում էր, թէ գոնայի խնդիրը շուտ կըվճռվի և համապատասխան պետութիւնը իր վրայ կըվերցնի բժշկական խմբերի պահելու ծախքերը: Խնդիրը ձգձգվեց և նիւթական միջոցների պակասութեան պատճառով բժշկական օգնութիւնը Լոռում ստիպված եղանք լիքվիդացիայի ենթարկել: Բայց ի նկատի ունենալով այն օգուտը, որ ունեցան ազգային խորհրդի ուղարկած բժշկական խմբերը, իմ և ընկ. Միանսարեանի կողմից յայտնում եմ, որ ազգային խորհուրդը կըշարունակի պահել այդ խմբերը մինչև Լոռում գէմստովօի հաստատումը: Ես ևս կողմնակից եմ, որ երկրորդ բժշկական խումբը Սանահնից տեղափոխվի Շնող, որ շատ աւելի մեծ գիւղ է:

Սուրէն Նրզնկեան. — Ուզունլարի հասարակութիւնը որոշել է պահել էստեղի բժշկական խումբը. եթէ ազգային խորհուրդը ուզում է շարունակել պահել երկու բժշկական խումբեր Լոռում, ապա մենք կունենանք մեր ձորերում երեք խումբ, մէկը Ուզունլարում, միւսը Շնողում և երրորդը... Ներքոյը ես առաջարկում եմ բացել Վօրօնցովկայում: Կողմնակի, ազգային խորհուրդի օգնութեան, նիւթական աջակցութեան կարիքը մենք կունենանք ամենաշատը միայն երկու ամիս՝ մեր ինքնավարական գործի նկարագրական շրջանում...

Արամայիս Նրզնկեան. — Մենք երկուսովս, ես և ընկ. Միանսարեանը խոստանում ենք պահել նախկին բժշկական խմբերը. բայց նորը բանալու մասին խնդիրը բաց է մնում: Այդ մասին մենք կարող ենք զեկուցել ազգային խորհրդին... *)

*) Ծանօթութիւն. — Վրաստանի ազգային խորհուրդը շրջապատից իր խոստումը և բժշկա-սանիտարական երկու խմբերի նոյնիսկ զեկուցեց ամսվայ ծախքերը հոգաց Լոռվայ «Ինքնակոչ» գէմստովօն:

Ա. Աթանասեան—Ես նոյնպէս գտնում եմ, որ երբորդ բըժշկական պոնկտը պէտք է բանալ Վորոնցովկա գիւղում, ուր միայն մի ֆէլդշէր կայ. այդ չի կարելի իսկապէս բժշկական օգնութիւն անվանել, մասնաւորապէս որ ձրի չէ, ուրեմն և մասնաւորապէս բոլորին:

Գորոզկով. — Ես առաջարկում եմ բացվելիքի երբորդ բժշկական խումբը ուղարկել ոչ թէ Վորոնցովկա, այլ Պրիվոլնոէ. Վորոնցովկան ունի գոնէ ֆէլդշէր. Պրիվոլնոէ և ընդհանրապէս այս շրջանը բոլորովին կտրված են ճանապարհներից, կանոնաւոր հաղորդակցութիւն չունենք և բժշկի կարիքը շատ մեծ է մեզանում:

Բժիշկ Մելիք-Գրիգորեան— Ես կը կարգամ այն բանաձևը, որ առաջարկվում է ժողովիդ հաւանութեանը. —

«Լսելով բժիշկ Կարապետ Մելիք-Գրիգորեանի զեկուցումը Լոսովայ նէյտրալ զօնայի բժշկա-սանիտարական ներկայ գրութեան մասին, զօնայի Գիւղացիական Պատգամաւորների խորհուրդը որոշեց.

1. Ազգաբնակչութեանը լայն, շուտափոխել և ձրի բժշկական օգնութիւն հասցնելու համար պահեն զօնայի սահմաններում երեք բժշկա-սանիտարական արշաւախումբ — Շնողի, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանում — մատակարարելով նրանց անհրաժեշտ դեղորարքով.

2. Դիմել հայոց և վրաց կառավարութիւններին զօնայի կարիքների համար յատկացված գումարներից բաժին հանել յիշեալ բժշկական արշաւախումբին, գնելով այդ գումարը Լոսովայ Գիւղացիական Պատգամաւորների խորհուրդի Գործադիր Մարմնի տրամադրութեան տակ:

Սուրէն Նրզնկեան— Ես առաջարկում եմ մտցնել հետեւեալ ուղղումը. «Ստանհի բժշկական խումբը անմիջապէս տեղափոխել Շնող գիւղը». նաև Պրիվոլնոի ներկայացուցչի ուղղումը. — «Վորոնցովկայի շրջանում կազմակերպվելիք բժշկական օգնութեան կենտրոնը լինելու է Պրիվոլնոէ գիւղը»:

Նախագահ — Եթէ ուրիշ ուղղումներ չկան, ապա ես բժշկի առաջարկած բանաձևը ընկեր Սուրէնի ուղղումներով կըմտնեմ քվէաւելութեան:

Բանաձևը ուղղումներով անցնում է միաձայն:

Նախագահ. — Մօտքը պատկանում է ուսուցիչ Յարութիւն Դուրգերեանին զեկուցանելու համար «Դպրոցական գործը նէյտրալ զօնայում» խնդրի մասին:

Յ. Դուրգերեան — Եթէ մի թեթև ակնարկ գցենք մեր չէզոք զօնայի կրթական գործի վրայ, կըտեսնենք, որ այստեղ դպրոցական գործը գտնուում է ամենամիթար դրութեան մէջ: Զօնայի գիւղերից շատ քչերն է, որ ունեն դպրոցներ. կան գիւղեր, որտեղ դպրոցը միայն անունով գոյութիւն ունի, իսկ այդ դպրոցներում պարապմունքներ և երեխաներ չկան: Կան դպրոցներ, ուր որպէս ուսուցիչ «հրավիրվել» են զանազան պատահական տիրացաներ: Դպրոցներից դուրկ գիւղերի երեխաները ձմեռը պարապմունքներից բթանում են կամ դադարում զանազան անօգուտ, յաճախ նոյնիսկ վնասակար խաղերով: Դպրոցից դուրկ գիւղեր, թէկուզ մեր Ուզունլարի շրջանում ես կարող եմ թվել ամբողջ տասնեակից աւելի — Մքարի, Հագվի, Գաճաճկուտ, Ամօջ, Արդվի, Մղարթ, Ղաչաղան, Յաթէր, Յովհանսաձոր, Որնակ և այլն:

Սրանց երեխաներից շատ քչերն են արժանանում որևէ ուրիշ գիւղի դպրոց մտնելու, այն էլ մեծ ծախսերով և դժվարութիւններով: Եթէ մի բոպէ թողնենք դպրոց չունեցող գիւղերը և ուշադրութիւն դարձնենք թէ ինչպէս են գործում զօնայի եղած դպրոցները, կըտեսնենք, որ այստեղ պարապմունքները տարվում են վերին աստիճանի անկանոն և անմիթար պայմաններում: Նախ ուսումը սկսվում է աշնանը շատ ուշ. յետոյ, կամ աշակերտներն են ուշ գալիս և կամ ուսուցիչն է դադարված լինում իր գործերով. կամ նստարաններ չկան, կամ դպրոցական շէնքն է քարուքանդ. կամ դասագրքեր չկան, կամ հնարաւորութիւն չի տրվում մեզ, արգելվում է տետրակ ու մատիտ, գիրք ու թանաք բերել, ներմուծել զօնան, և այլն և այլն:

Այս, ըստ երևոյթին, աննշան խոչնդոտները դպրոցական կեանքի համար մեծ նշանակութիւն ունեն և խիստ կերպով անդրադառնում են մանուկների կրթական գործի վրայ:

Բայց կայ և մի այլ, աւելի խոշոր պատճառ, որ թոյլ չի տալիս ուսուցչին ամբողջ սրտով նւիրվել իր գործին. — դա՛ մեր ուսուցչութեան նիւթապէս անապահով դրութիւնն է: Մեր ուսուցիչը կանոնաւոր ուժիկ չունի և կանոնաւոր չի ստանում իր այդ չնչին ուժիկը: Միայն վերջերս ստանում են մի հազար ուսուցչի ամսակաւ և այն էլ մի քանի ամսով ուժիկ չկան տալիս: Բնականաբար ուսուցիչը ստիպված է բացի դպրոցից գաղվել այլ պարապմունքներով, որ ինքը և իր ընտանիքը քաղցից չըմեռնեն: Եւ ուսուցիչը կամ ժամանակին չի գալիս, կամ օրերով ամենին

չի գալիս դպրոց. իսկ եթէ գալիս է՝ այնքան յոգնած է լինում որ միևնոյն է թէ չհեկած...

Այս էլ ասեմ, որ երբ ծագեց ազատութեան սրբը և տաքարձուների ընտրութիւններ կատարել, որոնք ժողովվելով Ուսումնական շահագործող ամբողջ միապետական մէխանիզմը, գիւղաշուրջում՝ մտածեն իրանց անելիքի մասին: Որնակը արդէն ընկած-թողնողական ուսուցիչը կարծում էր թէ իր գրութիւնն էլ իր զարոյցական հոգարարձութիւն: Որնակը, ինչպէս Լօովայ կը բարեկամի, մի փոքր ինքն էլ մարդավարի կեանք կը վարի այսպէս գիւղ, իրաւունք ունի դպրոցի և կուսենայ անշուշտ Բայց սուսետե և հնարաւորութիւն կուսենայ ամբողջապէս իր գործիքնական է, որ եթէ մենք հնարաւորութիւն ունինք մի կամ երկուսը — մանկավարժութեան նվիրվել: Բայց մեր զօնայի ուսուցչուհու դպրոց բանալու առաջին հերթին պէտք է բանանք մեծ գիւղում, թեան նիւթական գրութիւնը աւելի ևս վատացաւ: Ապրելով հետոյ փոքր, որովհետեւ մեծ գիւղում աւելի հեշտ է դպրոցի և անտեսական ծանր պայմաններում, ուսուցիչները չեն կարող իրաւունքի համար յարմար շէնք գտնել և աշակերտների թիւն էլ բնից պարտքը կատարել ինչպէս հարկն է և մենք իրաւունք չունենալով աւելի կը լինի: Բացի դպրոցներ բանալուց, պէտք է կովել ներք նրանց մեղադրելու, երբ նրանցից շատերը կարիքից ստիպման Տէր-Թողիկեան դպրոցների դէմ, Տէր-Թողիկեանի դէմ, որոնց ված մտածում են ստանալ միլիցիոնների պաշտօն, որովհետեւ երբ մասին ևս կարդացել ու լսել էի, բայց չէի տեսել: Էդպիսի Տէր-Ղինա շատ աւելի լաւ պայմաններումն է՝ քան մանկավարժը, աւթողիկեան դպրոց գոյութիւն ունի Սաթէր գիւղում, ուր «մանկավարժութիւն» է անում մի տաճկահայ գաղթական քահանայ, որը

Բացի այս բոլորից, մեր զօնայի դպրոցները չունի փորձարկելու ու ցըտեսութիւնը իրարից լաւ չի տարբերում (ծիծաղ): Ված մանկավարժ — ինտորուկտոր, ղեկավարելու դպրոցականն իր պարտքը համարեց ներկայանալ ինձ և իր գոյութեան գործը և հարկաւոր ուղղումները անելու դաստիարակութեան ձևի կառույցը յարապակեցութեան մասին աղերսել: Բայց մենք կամ պէտք է կադաստիարակութեան մէթոդի առթիւ: Ես առաջարկում եմ ընտնուաւոր դպրոց պահանք, կամ աւելի լաւ է չը պահել, քան բազմացնենք Լօովայ Տէր-Թողիկեան օջախներ: Պէտք է նաև ստեղծել

— Ի նկատի ունենալով Լօովայ նէյտրալ զօնայի կըթական նշանակալի պայմաններ, որ ուսուցիչը միլիցիոններ դառնալու մագործի անմխիթար գրութիւնը, զօնայի գիւղացիական պատգամին չը երազի...

մաւորների խորհուրդը որոշեց.

1. Աւելացնել դպրոցների թիւը ներկայ ուսումնական տարիների թիւը աւելանայ և այն էլ մօտ ապագայում, ապա աշխատենք, որ գոնէ հարկւր տասնից աւելի ունեցող գիւղերում դպրոց բանանք և ուսուցիչների ուսմանը բարձրացնենք Հայաստանում և Վրաստանում ընդունված վարձատրութեան չափերին:

2. Դպրոցական շէնքը և դասարանների բնակարանն ու վանքերը հայթայթելով տեղական միջոցներից, ուսուցիչների վարձատրութեան համար դիմել վրաց և հայոց կառավարութիւններին, առաջարկելով զօնային յատկացված գումարներից բաժին հանել վերոյիշեալ նպատակի համար.

3. Դպրոցական գործի ընդհանուր ղեկավարութեան համար հրաւիրել մի հմուտ մանկավարժ — ինտորուկտոր.

4. Պահանջել հայոց և վրաց կառավարութիւններից զօնայի ուսուցիչների ուսման գէթ հաւասարացնել այդ պետութիւնների մէջ ընդունված վարձատրութեան նորմաներին:

Որնակ գիտի ներկայացուցիչ — իսկ էն գիւղերը, որտեղ հարկւր տուն չկայ, չպէտք է դպրոց ունենան:

Սուրեն Երզնկեան. — Լօովայ գիւղերը շրջելիս, ես մեծ թէ փոքր գիւղերում առաջարկել եմ անմխիթապէս դպրոցական հոգարարութիւնը աւելանայ և այն էլ մօտ ապագայում, ապա աշխատենք, որ գոնէ հարկւր տասնից աւելի ունեցող գիւղերում դպրոց բանանք և ուսուցիչների ուսմանը բարձրացնենք Հայաստանում և Վրաստանում ընդունված վարձատրութեան չափերին:

Չեկուցանողի առաջարկած բանաձևը քվեարկութեան է դրվում և ընդունվում:

Մախսուզար. — Առաջարկում եմ մի ժամով ընդհատել նիստը: Առաջարկութիւնը ընդունվում է:

Ա. Աթանասեան. — Եթէ ուզում էք, որ իսկապէս դպրոցների թիւը աւելանայ և այն էլ մօտ ապագայում, ապա աշխատենք, որ գոնէ հարկւր տասնից աւելի ունեցող գիւղերում դպրոց բանանք և ուսուցիչների ուսմանը բարձրացնենք Հայաստանում և Վրաստանում ընդունված վարձատրութեան չափերին:

Չեկուցանողի առաջարկած բանաձևը քվեարկութեան է դրվում և ընդունվում:

Մախսուզար. — Առաջարկում եմ մի ժամով ընդհատել նիստը: Առաջարկութիւնը ընդունվում է:

Ժամը հինգին վերսկսվում է նիստը:

Նախագահ.— Խօսքը պատկանում է ընկեր Ս. Զուրաբեհին, որը կըզեկուցանի տուրքերի մասին:

Ս. Զուրաբեհյան.— Տուրքերը երկու տեսակ են— պետական և հասարակական: Հին կառավարութիւնը այդ երկու տեսակ տուրքերը հաւաքում էր միաժամանակ. մի մասը թողնում էր ազական կարիքների համար, միւս մասը յատկացնում պետական կարիքներին: Բայց **փրստօրէն համարեա ամբողջ հաւաքվողումարը ծախսվում էր զինուորական—պատերազմական պէտքերի և միայն շատ աննշան, չնչին մասն էր գործադրվում կուտուրական նպատակների վրայ:**

Սրանից քառասուն տարի առաջ հարկը հաւաքվում էր Ե ծխերի. գիւղացիք էլ այդպէս էին տալիս հարկը, ի նկատի չնենալով ունեցվացքը: Յետոյ փոխվեց երեսի: Նրանից յետոյ զի Շատ հող ունեցողը աւելի էր տալիս, քան բիշ հողատէր: Ուղղւելով դոյութիւն ունէր հարկահաւաքման երեք կատարի— 1) հողի, 2) տաւարի կամ հարստութեան, 3) երեսի: Միապետութեան տապալումից յետոյ սկսւում էինք, որ հարկաւորման ձևերը լաւանան. բայց ընդհակառակը աւելի վատթարացան: Լօռում: Իսկապէս որ անտէրացաւ մեր երկիրը: Անգլիացիք եւ կամիսարիաւոր նեղութիւն չըկրեցին տեղեկութիւն հաւաքեալ տնտեսական դրութեան մասին և այնպէս հարկ նշանակել, առանց այլեայլութեան նշանակեցին երեսուն և վեց հազար երկուսովայ համար: Հարկը հաւաքվում էր ըստ գլխի, ամեն մէկ երկու ուրբի հօթանասուն և հինգ կողէկ: Վերեւից հրամանը գլխի է և ներքեւից ի կատար է ածվում: Անցածի համար, տված ոչինչ չի կարելի անել. իսկ ներկայի համար մնում է կամ տրտունջ տանել կամ մի սխտեմ մտածել հարկահաւաքման համար: Զնայած որ հարկը պահանջվում է ըստ գլխի, բայց այն ամենայնիւ մեր գիւղը իւր ըմբռնումով բաժանել է երեք մասի— հող, 2) ջուր, 3) տաւարը—այսինքն ըստ կարողութեան: Եթէ իմի ժամանակ հաւաքում էին 863 ռ. հարկ, պատերազմ ժամանակ 1.280 ռ., յեղափոխութեան շրջանում 1480—1800 իսկ այժմ—նէյտրալ զօնայի օրերին 144.000 ռ., մի քանի հազ էլ տանել-բերելու վրայ է ծախսվում, մի—խօսքով, կլօր թիւ դուրս է գալիս հարկեր յիսուն հազար:

Տուրքերը հաւաքվում են երկրի կառավարութեան գլխաւոր

րապէս ադմինիստրացիայի ծախքերի համար. այդ գումարից միայն մի չնչին մասն է յատկացվում դպրոցական գործին, այն է՝ պահվում է վեց դպրոց: Այդ խոշոր հարկը չափազանց ծանրացնում է գիւղացու գրութիւնը, որը ուտելու հաց չունի և իր վերջին կողէկները, իր ունեցած չունեցածը տալիս է հացի: Մենք պէտք է ձգտենք թեթեւցնել հարկերի ծանրութիւնը, հարկերի հաւաքման և գործադրութեան գործում մասնակից անել ժողովուրդին և ժողոված գումարները գործադրել ժողովրդի անմիջական կարիքների, պէտքերի վրայ: Հարկերի բաժանմանը պէտք է մասնակցի ժողովուրդը:

Լօռվայ զօնայի հարկային սիստէմը կանոնաւորելու համար պէտք է միջնորդել երկու հարեան կառավարութիւններին և խնդրել, որ վճարածով բաւարարվեն և ի նկատի ունենալով ժողովրդի աղքատ վիճակը նշանակված հարկ չը հաւաքեն, յետաձգեն մինչև նոր բերքը, նոր հունձը:

Դ. Յակոբեան. (Կօմիսար երկրորդ, Ուղուլարի ուսոյնի).— Զարմանալի է, որ Սերգի Զուրաբեհանը այսքան ժամանակ չգիտէ այստեղի հարկերի բաժանման ձևը: Մենք էլ կարողորել էինք, որ պէտք է անպատճառ հաւաքել հարկերը ըստ կարողութեան, բայց գիւղացիները իրենք չեն աշակցում մեզ. օրինակ Սերգի գիւղի կալվածատէրերը դիմել են Կօմիսարիատին և հարկը տալիս են ըստ շնչի: Միջնորդել երկու կառավարութիւններին, որ հարկերի հաւաքումը յետաձգեն, նշանակում է մոլորթալքել նուրբ: Հարկերը պէտք է հաւաքվեն, որ պահվի ադմինիստրացիան, և ինչու ուրիշ տեղեր, օրինակ Ղարաքլիստան, պէտք է հարկ տան, իսկ Ուղուլարն ու Սանահինը չըտան:

Ս. Զուրաբեհյան.— Ի՞նչպէս էին հաւաքում հարկը անգլիացիք...

Դ. Յակոբեան.— Պօղախօղնի:

Արամայիս Երզնկեան.— Հարկը պէտք է վճարեն. պէտք է ուսումնասիրել երկրի դրութիւնը և պրօգրեսիվ հարկը բաժանել վոյստների, գիւղերի և անհատների վրայ: Հարկերի մեծ մասը պնդում է ադմինիստրացիայի վրայ: Ամբողջ Բօրչալուի գաւառը կառավարում էր մի պրիստովով, իսկ այժմ նրա մի մասը անցել է Վրաստանին, միւս մասը Հայաստանին, իսկ մնացորդը—նէյտրալ զօնան բաժանել են երեք վոյստի, կառավարվում է մի գեներալ-գուբերնատօր, երկու նաչալնիկ, երեք վոյստնոյ Կօմիսար-

ներ և 150 միլիցիոներ, փոխանակ նախկին 10—15 չափաբանների։ Ստեղծվել է մի հսկայական ապստամբություն, որի պահելու համար ստիպված են ժողովել մեծ հարկեր։ Եթե ադմինիստրացիան պահպաներ, այն ժամանակ հարկերի մի մասը կըկրճատվեր։ Պետք է ընտրել մի գործադիր մարմին, որ մինչև զեմստվոյական հաստատութիւնների մտցնելը կատարի զեմստվոյի ֆունկցիաները, այսինքն՝ ինչպէս քաղաքային միլիցիան ենթարկվում է քաղաքային ինքնավարութեան, այնպէս էլ Լուվայ ադմինիստրացիան ենթարկել ժողովրդից ընտրված մարմնին։ Մենք չենք փախչում հարկից. այլ ի նկատի ունենալով գիւղացիներին տնտեսական դժուրութիւնը առաջարկում ենք մինչև նոր բերքը յետաձգել ժողովումը։

Մոսկով Աւետիսեան (Ալլավերդու կոմիսարիատի գրագիր).—Չպէտք է կրճատել կոմիսարիատի միլիցիան, որովհետև այսօր քան էլ խզի չի կարողանում կարգ պահպանել։ Իսկ եթէ ծառայենք հինգ հարիւր հոգի, գողութիւն և աւազակութիւն բոլորովին չէր լինի։

Սուրէն Նրզնկեան.—Ադմինիստրացիայի ներկայացուցիչները էստեղ աշխատում են արդարանալ և արդարացնել իրանց տէրերի արարքները։ Բայց նրանց չեն մեղադրում էնպիսի բաների մէջ, որ ամենքիդ, Լուվայ ամբողջ ժողովրդիդ յայտնի չըլինէր։ Կոմիսարիատի գրագիրը, Ալլավերդու ուղարկած մեղ լաւ յայտնի խոսքովը ասում է, որ եթէ միլիցիայի թիւը հասցնենք հինգ հարիւրի (ինչու ոչ հազարի...) ապա գողութիւն ու աւազակութիւն չի լինի մեր երկրում։ Բայց ես պէտք է ասեմ, ու դուք բոլորդ գիտէք որ ճշմարիտն եմ ասում, որ աւազակութիւնն ու գողութիւնը Լուով կը կտրվի միայն էն ժամանակ, երբ ամենին կըվերանայ էս տեսակ խայտառակ միլիցիան...

Չայնեք.—Ճիշտ է ասում Սուրէնը...

Ով չըգիտի ձեզանից, այ լուսեցիներ, որ բոլոր թաւանների ու սպանութիւնների թելերը տանում են Ալլավերդի, որը մատը մատին չի խփում մեր երկիրը խաղաղացնելու համար։ Ասում են պիսէր պրիստաւները, թէ միլիցիոներներ թիւը քիչ է. բա Ալլավերդում քիչ միլիցիոներ կար, որ գնեւալ-գուբերնատորի ու զլխաւոր պրիստաւների քթի տակից գողացան տարան կոմիսարիատի ձիաները... (ընդհանուր ծիծաղ)։

Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնը ասում է, որ ազգային գիւղացին չպէտք է խարջ վճարի ոչ կառավարութեան և ոչ էլ

կալվածատիրոջը կամ կուլակին որոնցնա գրկեց բոլոր իրաւունքներից։ Հարկը պէտք հաւաքել միմիայն ունեւորից։ Խարջերը, էն էլ բոլոր խարջերը պիտի վճարեն հարուստները։ Իսկ մեզ մօտ Լուովում ինչ ենք տեսնում. պիսէր—պրիստավ գիւղերն ընկած պլէտով, մաթրախով խեղճ ունչպարի, կիսաքաղցած, հալից ընկած գիւղացու կաշին մաշկելով, բռնութեամբ պոկում տանում են, եթէ էլ ընդ մեզ և մնացել գիւղացու տանը։ Թող ադմինիստրացիայի ներկայացուցիչը ինքը ասի, թէ որտեղ և ինչքան անգամ է ծեծով հաւաքել խարջերը...

Դ. Յակոբեան (կոմիսար).—Ես բոլոր գիւղերումն էլ ծեծել եմ. գիւղական ներկայացուցիչները կարող են վկայել։

Սուրէն Նրզնկեան.—Խնդրում եմ արձանագրութեան մէջ մտցնել կոմիսարի խոստովանութիւնը... Երբ ադմինիստրացիայի ներկայացուցիչը ծեծով է հաւաքում խարջերը, երբ օրէնք չկայ, որ գիւղացուն պաշտպանէր պլէտից, երբ ոտքի տակ է տրվում լեղափոխութեան նվիրական պատգամը՝ որ մարդկանց չի կարելի վրաստի, անասունի նման թակել, միթէ կարելի է էսպիսի ադմինիստրացիայի ձեռքին թողնել հարկահաւաքման գործը, միթէ ես կարող է արդար լինել հարկերը գանձելիս... Ո՛չ, էդ մարդկանց չի կարելի ժողովրդական ոչ մի կոպէկ վստահել։ Հարկ հաւաքողը, հարկ սահմանողը և էդ հաւաքածը ծախսողը ինքը աշխատաւոր գիւղացին պիտի լինի։

Մեղ խրատում է ադմինիստրացիան, թէ հարկ չը վճարելը — մութֆթա քէլէխ ուտէլ կընշանակի... Է՛հ, ինչ անենք, էսքան խաճառակ Ալլավերդու պրիստաւ պիսէրներն են «քէլէխ» կերել, թող մի քիչ էլ ժողովուրդը ուտի էդ քէլէխը (ծիծաղ ընդհանուր), թող աշխատաւոր գիւղացին իր հալալ քրտինքը իր համար պահի ու ժողովրդի թշնամիներին չուտացնի... (բուռն ծափահարութիւն)։

Ս. Զուրաբեան.—Հարկահաւաքումը և բաշխումը այնքան տուրք գործ է, որ եկեղ մարդը ծանօթ չըլինելով գիւղի ֆինանսական և տնտեսական գործին, չի կարող այդ գործը արդարացի կատարել։ Հարկահաւաքման գործը պէտք է յանձնել ժողովրդին, որ հաւաքի ըստ կարողութեան։ Ոչ մի կոմիսար, — ոչ վարդապետեան, ոչ Լոգիկայանիդէ և ոչ էլ մի այլ կոմիսար չեն կարող այդ գործը կատարել միայնակ. պէտք է լինի գիւղացի կամ կառավարի գիւղացիների մասնակցութեամբ։ Ադմինիստրացիայի

թիւը պէտք է քննարկել. քանի շատ կառավարիչներ, այնքան աւելի անկանոնութիւն: Ուրեմն Հարկերի ծանուցութիւնը թեթեւցնելու համար անհրաժեշտ է—1) կրճատել ազմիրխտրացիայի թիւը, 2) ենթարկել նրան ընտրված մարմին—գործադիր մարմին կամ ղեկավար, 3) Հարկերի բաշխումը և հաւաքումը յանձնել ժողովրդին, և 4) Յետաձգել հարկահաւաքումը մինչև նոր հունձը: Գիւղեր կան, որոնք բառիբուն նշանակութեամբ զրկված են հացից, ինչպէս օրինակ Ագարակ, Ուռուտ, Աքորի, Որնակ և այլն, կարկուտը բացարձակապէս տարել է հացը. Ուղունլարցիները ղէզերը դարսել էին, բայց անօգուտ. առթիւ ամբողջովին փչացրել է, երկու սայլ խորցրից դուրս է գալիս երկու խանցորէն...

Ուստա Գալուստ (Ուղունլարի ներկայացուցիչ).—Կոր ու բէգարը նոյնպէս մի սարսափելի ցաւ է դարձել ժողովրդի գլխին: Միլիցիան գիւղացիներին հերթով ձրի աշխատեցնում է իրանց ազմիրխտրացիայի կարիքների համար: Բա հնար չկայ վերջ դնելու էս անօրէնութեան:

Ա. Աթանասեան.— Այստեղ խօսում ենք ղեկավարի ամենաէական հարցերի մասին. երբ արդէն մտցնենք ղեկավար, այն ժամանակ ղեկավար ինքը կանի այդ բոլորը. ձեր ասածները մտնում են ղեկավարի պօստէնիայի մէջ:

Սուրէն Երզնկեան.— Ուստա Գալուստը մի շատ հետաքրքիր հարց բարձրացրեց, որ չի կարելի անուշադիր թողնել: Ազմիրխտրացիան քմահաճօրէն զանազան պահանջներ է անում գիւղերից, ստիպում է իր համար խոտ, փայտ բերել, որոշ թիւ սայլեր կամ ձի ու էջ հանել կօմիսարների կարիքների համար: Էս ձևի տուրքը շուտ զգալի է գիւղացու համար. բերեմ մի օրինակ—Հաղբատեցիներին (ես Հաղբատեցի եմ ու լաւ գիտեմ էդ բանը) ստիպում են երկու, երեք կամ հինգ սայլ բերել Մանէս ազմիրխտրացիայի էս կամ էն կարիքների համար: Ի՞նչ լաւ էք հասկանում թէ ինչ ստել է Հաղբատից Մանէս սայլ իջեցնել Խրմաձորի քէրծերով: Ամեն տեսակի և ձևի տուրքերը.— խոտով, փայտով, սայլով և այլն,— պէտք է վերածել փողի, որ պէտք է վճարեն միայն հարուստները, ունեւորները: Ազմիրխտրացեան իրաւունք չունի տանջել գիւղացոց իր քմահաճօքի բաւականութեան համար:

Նիկ. Նօլլեան.— Եթէ տուրքերը յետաձգեն մինչև յետագայ հունձը, այն ժամանակ եթէ ամսուայ տուրքը կարող են

միանգամից պահանջել և գիւղացին չի կարող վճարել: Հարկերը գիւղացին պէտք է տայ մաս-մաս, որ շատ զգալի չըլինի նրա համար:

Ա. Աթանասեան.— Եթէ ցանած հացը ստացվեց, այն ժամանակ կարելի կըլինի հարկերը հաւաքել, մանաւանդ որ տուրք հաւաքողը ղեկավար ղեկինի: Իսկ եթէ բերքը չի լինի, այն ժամանակ աչքներս կըդարձնենք այլ կողմը, դիմումներ կանենք այս կամ այն պետութեան:

Սուրէն Երզնկեան.— Ընկ. Նօլլեանի պահանջը միանգամայն հասկանալի է. գործադիր մարմինը կամ ղեկավար պէտք է հարկը հաւաքի գիւղացու համար անզգալի կերպով, մաս-մաս. բայց դա ապագայի խնդիր է: Էսօր մենք պահանջում ու որոշում ենք, որ նշանակված հարկերը չը վճարվեն:

Ս. Ջուրաբեան.— Ես կը կարգամ տուրքերի մասին մեր առաջարկված ընդօրէցիան, բանաձեւը.— Լօւվայ նէյտրալ ղօնայի Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդը լսելով Սերգի Ջուրաբեանի ղեկըցումը Լօւվայ տուրքերի մասին, որոշեց՝—

1. Դիմել հայոց և վրաց կառավարութիւններին, պատճառաբանված բացատրադրով յանձնելու ղօնայի Գործադիր Մարմին տուրքերի ինչպէս ժողովումը, նոյնպէս և բաշխումը:

2. Յանձնարարել Գործադիր Մարմինն անմիջապէս ձեռնարկել որոշ ծրագրով և նախահաշուով Լօւվայ նէյտրալ ղօնայի տնտեսական վիճակագրութեանը, մօտ ապագայում կազմակերպելու համար տուրքերի արդարացի բաշխումը և ժողովումը համաձայն եկամտային պրօգրէսիվ հարկաբաժանման.

3. Ի նկատի ունենալով Լօւվայ տնտեսական-պարենաւորման ներկայ ճգնաժամը, դիմել հարեան կառավարութիւններին՝ առաջարկելով չըժողովել ժողովրդից գանձվելիք տուրքը մինչև առաջիկայ հունձը:

Նախագահ.— Առաջարկված բանաձևի գէտ եթէ առարկութիւն չկայ, ես կըդնեմ քվէարկութեան:

Բանաձևը ընդունվում է:

Չայներ.— Մենք խորջերը մեր մէջ թովջի ենք արել և փողն էլ հաւաքել, տմնք թէ չէ...

Սուրէն Երզնկեան.— Թովջի արած փողերը պահեցէք ձեր ուրիշ հասարակական կարիքների համար—հացի, դպրոցի, ճանապարհ շինելու համար:

Չայններ— Բառ չենք վճարելու, էլի...

Սուրեն Նրզնիկեան.— Ձէ, չպիտի վճարէք, մինչև որ պատասխան ստանանք ձեր դիմումի մասին:

Նախագահ.— Խնդիրը միանգամայն պարզէ. ձեր ընտրութեան մարդիկ դիմումն են անելու վրաց և հայոց կառավարութիւններին տուրքերի մասին և մինչև պատասխան ստանալը՝ երկ կողմերն էլ—գիւղացիք էլ, կոմիսարներն էլ պիտի սպասեն տեսնենք ինչ կասեն հարեան պետութիւնները: Այժմ անցնենք օրակարգի հետեւեալ թնգերին՝ «Արդարադատութիւնը Լօսում» խօսքը պատկանում է ընկեր Սուրենին:

Սուրեն Նրզնիկեան.— Բուրժուական երկրներում պարբերականները, իսկ յեղափոխական բանւոր գիւղացիական երկրներում Բանւորական և Գիւղացիական Ներկայացուցիչների Պորտոգինները օրէնքներ են ստանում ու հրատարակում, որոնք պարտադիր են իրանց երկրի սահմաններում ապրող բոլոր մարդկանց քաղաքացիների համար: Բուրժուական աշխարհում պարծենում են նրանով, որ օրէնսդրական, — օրէնքը ստեղծող, դատաստանական — հրատարակված օրէնքով դատող և կատարողական օրէնքի հիման վրայ դատաստանի վճիռները իրականացնող մարմինները իրարից բոլոր չափով աւտօնօմ են, անկախ և մի նոյն մարդը չի կարող միաժամանակ համ օրէնք գրելնել, համ այդ օրէնքով դատող և համ էլ իր դատարարը: Եղպիսի կարգ է ընդունված Վրաստանում և Հայաստանում, որոնց վիճելի մասն է կազմում մեր զօնան, ուրեմ և Եղպիսի կարգ էլ — քանի յեղափոխական կարգը դեռ չի մեղ մօտ, — պէտք է լինէր էս անտէր զօնայում: Բայց էստեղ մեն ինչ թարս է. ոչ հին օրէնքը կայ և ոչ էլ նորը, յեղափոխականը: Էստեղ ամեն ինչ Ալլավերդու պրիստաւ-պրիստերն են թէ օրէնքը, թէ դատարարը և թէ կատարողը՝ իրանք ձեռն և իրանք էլ կտրում... Ո՞վ կարող է նրանց բան ասել կամ գելել: Հին րէժիմում Լօսվայ Ժողովուրդը գեթում էր, երբ զատ ունէր, կամ Ջալալ-Օղլի կամ Շուլավերի միջով սուղ հաշտարար դատարարին և նա էլ օրէնքի գիրքը բաց էր նում ու վճում էր էնպէս, ինչպէս որ իր ժամանակի օրէնք հրամայում էր: Ժողովուրդն էլ գիտէր, որ կայ մի օրէնք, թէ վատ էր մի կողմը թողնենք, բայց կայ մի օրէնք, ու գիտէր ինչ կարելի է անել, ինչ չէ, ինչը օրէնքով է և ինչը ապօրինի: Երբ մի տեղ սպանութիւն էր լինում, ուղարկվում

գաւական դատաստանական քննիչ, սուղէքնի սլէղօվատել, որը մանրամասն քննում էր գործի էութիւնը, տեղն ու տեղը արձանագրութիւն կազմում ու գործը յանձնում դատարանին: Այժմ քննիչն էլ, դատարարն էլ մեր պիսէր-պրիստերներն են, որոնք իրանց տանը նստած պրօսոօլօններ են սարքում և կարծում են, թէ արդարադատութեան գործ են կատարում: Ամենաօրինական էլ ապօրինի է, եթէ Ալլավերդու պիսէր-պրիստավի քէֆը էդպէս է տալիս, և ապօրինին օրինական եթէ կամիսարիատում կապեր ունենա, քո խաթրը ունենա: Իսկ դուք գիտէք, թէ ինչ ասել է կամիսարիատում կապեր ունենալ և թէ ինչու են պիսէր-պրիստաւ մարդկանց խաթրը պահում... Գօմիսարները մի մի րէգեր կամ իշխաններ են՝ հին, շատ հին ձևի, — որոնք ոչ միայն օրէնքներ են սահմանում ու դատաստան կրում, այլև վճում են ամեն տեսակ հողային վէճեր, մէկից խլում, միւսին տալիս վարելահողը կամ խօտարքը: Հին, նիկօլայի օրէնքը, որ մեր օրէնքը չէր, որ բանւոր-գիւղացու դէմ էր գրված և պաշտպանում էր պամէշչիկի, հարուստ դասակարգի, կալվածատէրի ու կուլակի շահերը, նա չէր վստահանում, մավա գնում հողային վէճերը նոյնիսկ ամեն դատարարի ու ամեն դատարանին: Հողային կնճռոտ խնդիրը շատ անգամ վճովում էին յատուկ դատարաններում, ուր նստած էին լինում հողի վէճերում փորձված դատարարներ: Էստեղ, մեր անտէր զօնայում Ալլավերդու մի քնճռոտ սէկլէտար, մի Արամ կամ մի Մոսէս զրէի պոչով վճում են հա վճում ամենադժուար հողային վէճերը մի քանի րոպէում...

Էս բաները, Ալլավերդու արարքները դուք ինձանից լաւ գիտէք, ու ես կարճ կտրում եմ իմ ասելիքս, անհրաժեշտ է անմիջապէս հրաւիրել գոնէ առ այժմ մի դատարար և մի դատաստանական քննիչ — ի հարկէ պատրաստված անձնաւորութիւններից, — արդարադատութեան գործը կանոնաւոր, օրինական հողի վրայ դնելու թէկուզ էն չափով, ինչ չափով որ արված է մեր հարեան պետութիւնների սահմաններում: Բայց մեր դատարարը, ինչպէս և քննիչը Ալլավերդուց անկախ պիտի լինեն, Ալլավերդուն չըպէտք է ենթարկվեն, որպէսզի չվարկաբեկվեն նրանք Ժողովրդի աչքում և Ալլավերդու կամակատարը չըդառնան:

Ես կըկարգամ առաջարկված բանաձևը:

— Լօսվայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւոր-

ների Խորհուրդը՝ լսելով Սուրեն Երզնկեանի գեղուցումը արդարադատութեան դործի անօրինակ անմխիթար դեռութեան մասին, երբ ամբողջ մի գաւառ զրկված է դատաստանական հաստատութիւններից, ինստիտուտից, որոշեց.

1. Դիմել համապատասխան կառավարութիւններին, առաջարկելով հնարաւորութիւն տալ պահելու զօնայի սահմաններում առ այժմ գտնէ մի հաշտարար դատաւոր (միւրովոյ սուղիւ) և մի դատաստանական քննիչ (սուղէքնի սլէզովատեղ)։

2. Գործադիր մարմին յանձնարարել այդ պաշտօնների համար անմիջապէս հրավիրել համապատասխան պատրաստութիւն և հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւններ։

Նախագահ.— Եթէ առարկութիւն չկայ առաջարկված բանաձևի դէմ, ապա ես կըքվէարկեմ։

Միաձայն անցնում է բանաձևը։

Նախագահ.— Մօսքը պատկանում է ընկ. Սերգի Զուրաբեանին, գեղուցանելու հողային խնդրի մասին։

Ս Զուրաբեան.— Հողային հարցին գիւղացիները սպասելիքեան հարիւրաւոր տարիներով։ Հողի դրութիւնը շարունակ փոխվելիքեան ներկայացուցիչները պահանջում էին յարգել Նիկօլայի է. Լօռում այլ է եղել սրանից եօթանասուն տարի առաջ, այլ միապետութեան շրջանում և այլ Յեղափոխութիւնից յետոյ։ Սրանից եօթանասուն տարի առաջ Լօռին կազմված էր չորս գիւղերից՝ Ուղունլար, Ղաչաղան, Կուրթան և Շահնազար։ Ամբողջ Լօռվայ գլխի տէրը այդ չորս գիւղերն էին, այնպէս որ Ուղունլարցիք Ագարակ սար էին իջնում, բայց չնայած դրան, երբ մէկի տաւարը անցնում էր միւսի հողը, արիւնյեղութիւն էր լինում։ Երբ այդ գիւղերի ժողովուրդը բազմացաւ, նա սկսեց ճնշվել և հարցը ինքն իրան լուծվեց. գիւղացիք սկսեցին գուրս գալ իրանց գիւղերից և նոր գիւղեր ստեղծել։ Ժողովուրդը սկըզբում այն եղրակացութեան էր, որ հողից պէտք է օգտվին բոլորը. հասկացողութիւն չկար թէ հողը կարելի է բաժանել։ Յետոյ գտան ձեր և սկսեցին բաժանել հողը գլխի վրայ։ Բայց չնայած դրան Շնող գիւղը մինչև այսօր էլ չի բաժանում և ամեն մի տուն իր հողը պահում է իր ձեռքին։ Ուղունլարցիք հողի բաժանումը սովորեցին ոռոգ գիւղերից. առաջին հողաբաժանումը կատարվել է ոռոտական Պրիվոնօէ գիւղում։

Հողը ունի իր էվօլյուցիան, պատմութիւնը։ Ազնվականի հողը անձեռնմխելի սեփականութիւն էր համարվում և գիւղացիք

մշակում էին միայն տիրոջ համաձայնութեամբ։ Ազնվականից գիւղացիք վերցնում էին հողը որոշ ժամանակով, պարարտացնում էին և մշակում։ Գիւղացիներից շատերը այնքան երկար ժամանակ էին մշակում միևնոյն տիրոջ հողը, որ համարեա տէր էին դառնում վերցրած հողին։ Գիւղացիք կամաց-կամաց հասկացան, որ հողը ժողովուրդի սեփականութիւն պէտք է լինի։ Հողատէրերը, կալվածատէրերը ի հարկէ համաձայն չէին գիւղացիների հետ և վէճը սուր կերպարանք է ստանում միապետութեան օրերին։ Այն եռուն ժամանակ մեր երկիրը եկան մի քանի ազատասէր երիտասարդներ, և սկսեցին հասկացնել ժողովուրդին իրանց իրաւունքները. բայց որովհետև գիւղացին լաւ չէր գիտակցում իր իրաւունքները, հողը համոզմունքով չէր վերցրած. ուստի երբ մեր երկրում վերջացաւ յեղափոխութիւնը կալվածատէրերը հետ դրավեցին իրանց կալվածքները և գիւղացին ոչինչ չստաց, անտրտուն յետ տվեց։ Երբ երկրին տէր դարձան անգլիացիք, նրանք յայտարարեցին, որ նէյտրալ զօնայի կարգերը պէտք է լինեն միապետութեան կարգերը։ Առանց մեր գիւղացու դրութեան մէջ մտնելու, անգլիացի «դեմօկրատական» կառավարութեան օրէնքները։ Այս հանգամանքից ևս օգտվեցին կալվածատէրերը։

Այստեղ բոլորը աշխատաւորութեան ներկայացուցիչներ են. ուստի ժողովը պէտք է յանգի այն եղրակացութեան, որ հողը պատկանում է աշխատաւոր գիւղացութեանը։ Անմշակ հողը փաս է թէ գիւղացուն և թէ քաղաքացուն. նոյնիսկ հազար տարի առաջ զրադաշտական կոչված կրօնում ասված է, թէ՛ «Նա է դրախտի բաժին, ով մի թիւ խամ հող կըվարի»։ անվարել հողում մուկը բուն է դնում և վնասում միւս մշակած հողերին։

Մենք այստեղ չենք կարող լուծել հողային խնդիրը իր բոլոր մանրամասնութիւններով. այսօր մենք ուռա պիտի տանք և վերցնենք ու վարենք բոլոր հողերը, և դրանով հաստատենք, որ այլևս ազնվական հողապետութիւն չկայ մեր Լօռում (Բուռն ծափահարութիւններ. ընդհանուր բացականչութիւն՝ «ուռա»)։

Միսկարեան (Արճէշի ներկայացուցիչ).— Չափազանց կարևոր հարց է հողային խնդիրը։ Զուրաբեանը մոռացաւ այդ խնդրին մօտենալ ամեն կողմով։ Մեզ մօտ հողային խնդիրը շատ մանրակրկիտ ծալքեր ունի.— ազնվական, մեծ գիւղ, փոքր գիւղ, դաշտ, արօտ, ձոր և այլն, հարցեր՝ որոնցից ամեն մէկի մասին պէտք է մտա-

ծել առանձին: Եթէ մի ձեռնահաս գիւղացիական մարմին չու-
նենաք այդ վիճելի հարցերը լուծելու համար, այն ժամանակ
արիւնյիղութիւնը էլի կը շարունակվի: Այդ հողային մարմինը
պէտք է գործի Գործադիր Մարմնի ղեկավարութեամբ:

Էվոյեան (Հաղթատի ներկայացուցիչ).— Զուրաբեանը խօսեց
մեծ կալվածատէրերի մասին, իսկ փոքրերի համար բան չասեց:

Մախազաւ.— Այդ հարցի մասին գործադիր մարմնի կամ
գէմստվօի Հողային Կոմիտէն կը մտածի:

Արամայիս Երզնկեան.— Վրաստանում և Հայաստանում
հողը կազմում է գիւղացու սեփականութիւն:

Քարինջի ներկայացուցիչ.— Մենք եկել ենք Քարինջից, որ
ձեզ մեր հին գաւառը ասենք, ու դուք մեր ու Դսեղի միջի վէճը
վերջացնէք: Մեր մէջ մարդասպանութիւն է եղել. մեզնից մէկին
սպանեցին դսեղեցիք:

Մախազաւ.— Քարինջ-Դսեղի վէճի մասին մենք կը խօսենք
առանձին:

Բէզլար (Շահնազարի ներկայացուցիչ).— Էն որ ասում են, թէ
Հայաստանում և Վրաստանում կերարվել են Ռուսաստանի Յեղափո-
խութեան սկզբունքները. սխալվում են, որովհետեւ էնտեղ հողը
չեն համայնացրել, այլ մեծ կամ փոքր չափով մնում է կալվա-
ծատէրերի ձեռքին:

Աթանասեան.— Խոշոր կալվածատիրութիւն չկայ Վրաստա-
նում. ես եղել եմ հողային կոմիտէաների մէջ և գիտեմ եղելութիւ-
նը. մնում է յիսուն դեսեսատին: Ձէզօք զօնայում հողային խըն-
դիրը կը լուծվի այնպէս, ինչպէս որ լուծված է այն պետութեան
սահմաններում, որին նա կը միացվի:

Սուրէն Երզնկեան.— Մեր նպատակն է էսօր և եթ լուծել
հողային խնդիրը ընդհանուր կերպով: Էսօրվայ էս նշանաւոր ժո-
ղով պէտք է ասի, պէտք է յայտարարի Լօւվայ աշխատաւոր
գիւղացութեան, որ հողի տէրը էն մարդն է, ով էդ հողի վրայ
աշխատում է, որ վերջնցաւ-պրծաւ կալվածատէրի, մեծ ու փոքր
ազնվականի իշխանութիւնը, որ հողային էն մեծ օրէնքը, որ
երկու տարի էս աշխարհի տէրերը, պրիստաւ-պրիսէրները, ազ-
նվականներն ու ազրուկները ծացկել են ժողովրդից, էդ մեծ օրէն-
քը մեզ էլ հասաւ, Լօւվայ ձորերն է ընկել: Աւելի մանրամասն
կերպով հողային խնդիրը կը լուծվի մօտ ապագայում, երբ կենտ-
րոնական հողային կոմիտէաը կը սկսի իր գործունէութիւնը: Էսօր

զնացք ասացէք Մոսնանց Վասիլին, «բարօն» Կոչէնբախին, «ֆօն»
Գատլիբին, «բէգ» Եգիգարովներին, Շահվերդովներին, Բաժբէուր-
Մեխիբովներին, Քալանթարովներին ու էլի ինչ գիտեմ ինչ ազնվա-
կանի ու կուլակին, որը ձեռքերը ծալած, չի բուխը բերանին ման էին
գալիս ու մէջքները կոացրածների վրա գոռում, ունչալարի քրտին-
քը ուտում, զնացէք ասացէք նրանց, որ նրանց մենք էսօր զր-
կեցինք հողից, որ նրանք «իրանց-պապական» ասված հողին ի-
րաւունք չունեն մօտականալու, որ էդ հողը գիւղացու սեփակա-
նութիւնն է, միայն աշխատաւոր գիւղացու... Զըվախէք հա,
էլի չը խարվէք, այ լօռեցինք. եթէ ուզեն խելի ձեր հողը,—
լաւ հասկացէք հա հողը ձերն է, ձերը,— ոխին տվէք. ձեր իրա-
ւունքները եթէ դուք չը պաշտպանէք՝ ոչ ոք չի կարող պաշա-
նել:

Գնացէք ասացէք քոստ Մոսնանց Վասիլին, որ Աղէգը
ձեռքիցը թռաւ-զնաց, և էլ ոչ պրիստաւ Լօրդկիպանիձէն և
ոչ էլ անպիական «ղուբէրնատօրի» բարաթը չի օգնի շահագոր-
ծելու Ուղունլարի, Մղրաթի, Ղաչաղանի, Ծաթէրի, Արզվու,
Հազվու, Օհանսաձորի ու էլ ինչ գիտեմ որտեղի նաչար ունչ-
պարներին...

Էլի եմ ասում, այ լօռեցինք, հողը ձերն է, և ով կը հա-
մարձակվի ձեր գէմը դուրս գալ՝ ոխին տվէք հա ու Մեծ Յեղափո-
խութիւնի էն մէծ օրէնքը, ձեր սուրբ և արդար իրաւունքը ձեռ-
ներիցը բաց չը թողնէք...

(Բռուն ծափահարութիւններ)

Զայներ.— Վայ իմ Մոսնանց Վասիլ, հիմա որ Աղէգդ
թամամ թռաւ...

Ս. Զուրաբեան.— Ես կը կարգամ առաջարկված բանաձևը
հողային խնդրի մասին:

— Լսելով Ս. Զուրաբեանի ղեկուցումը, Լօւվայ Գիւղացիա-
կան Պատգամաւորների Խորհուրդը որոշեց.

1. Յանձնարարել Գործադիր Մարմնին յայտարարել Լօւվայ
նէյտրալ զօնայի ազգաբնակչութեան, որ Ռուսաստանի Մեծ Յե-
ղափոխութեան օրէնքի համաձայն, կալվածատիրութիւնը իսպառ
վերացված է. հողը պատկանում է աշխատաւոր գիւղացութեան,
իսկ անտառները կազմում են պետութեան սեփականութիւն:

2. Գործադիր Մարմնին յանձնարարվում է կազմակերպել զօ-
նայի գիւղերում տեղական հողային կոմիտէաներ, որոնք Գործա-

դիր Մարմնի ներկայացուցիչների ղեկավարութեամբ կըլուծեն հողային վիճելի խնդիրները:

Բանաձևը ընդունվում է միաձայն:

Նախագահ.— Մենք չենք կարող անուշադիր թողնել Քարինջ-Դսեղի միջադէպը: Խօսքը պատկանում է Քարինջի ներկայացուցիչներին ծանօթացնելու համար ժողովականներին այնտեղ տեղի ունեցած դէպքերի հետ:

Յարութիւն (Քարինջի ներկայացուցիչ).— Դեկտեմբերի 13-ին, առաւօտեանից մինչև երեկոյ, Դսեղեցիք ու Քարինջեցիք դիրք էին մտել և կոտորում էին իրար մի կտոր հողի պատճառով: Դսեղի ու Քարինջի մէջ մի կտոր հող կայ, որի անունը շատերդ լսած կըլինէր— Չաղուց ձոր. այդ ձորի պատճառով մեր և դսեղեցոց մէջ կռիւները անխուսափելի են: Մենք խնդրում ենք մեր վէճը արդար լուծէք և չը թողնէք, որ մեծ գիւղը փոքր գիւղին ձնշի: Մենք ունեցանք մի սպանված և մի քանի վիրաւոր. քշել են մեր տավարը:

Արամայիս Երզնկեան.— Ես առաջարկում եմ պարտաւորեցնել Գործադիր Մարմնին մի կօմիսարիա ուղարկել այնտեղ և դադարեցնել տալ կռիւը: Դիմել այդ մասին նաև Հայաստանի կառավարութեան, քանի որ Դսեղը նէյտրալ գօնից դուրս է գրանվում:

Սուրէն Երզնկեան.— Միանգամայն անթոյլատրելի է մեզ համար, որ աշխատաւոր գիւղացիները իրար կոտորեն, իրար մէջ արիւն թափեն: Ի հարկէ սպանվածը մի խեղճ ու կրակ գիւղացի պիտի լինի. հարուստը հեռվից թամաշայ կանի և մաքումը կուրան էս մեծ ժողովը պէտք է ուղարկի իր ներկայացուցիչներին Քարինջ—Դսեղ, գործը տեղն ու տեղը վճռելու և երկու հարևան գիւղերին իրար հետ հաշտեցնելու: Չախուց ձորի պատմութիւնը շատ հին պատմութիւն է: Զօնի գիծը անցել է Էնպէս, որ Քարինջի կալվացքը անցել է Հայաստանի կողմը, իսկ ինքը—գօնաւորում են ջուրը ու ինչպէս ասում են Քարինջի ամբողջ մեղրն ու կարագը Ալլավերդին է կերել, խոստանալով Չաղուց ձորը տալ Քարինջեցոց: Բայց Ալլավերդին միայն կաշառք ուտել գիտի, նա ոչ մի խնդիր չի կարող լուծել յօգուտ աշխատաւոր գիւղացութեան:

Նախագահ.— Ես առաջարկում եմ յանձնարարել Գործադիր Մարմնին վաղն ևեթ ուղարկել իր անդամներից երկուսին Դսեղ-Քուրինջ, որը տեղն ու տեղը լուծի «Չաղուց ձորի» շուրջը ծագած վէճը:

Առաջարկութիւնը ընդունվում է միաձայն: Յանկալի է համարվում ուղարկել Քարինջ-Դսեղ Սերգի Զուրաբեանին և Սուրէն Երզնկեանին:

Նախագահ.— Խօսքը պատկանում է Արշակ Միանասրեանին, պարենաւորման գործի մասին զեկուցանելու համար:

Ա. Միանասրեան.— Ոչ մի Գիւղացիական Պատգամաւորների համագումարին մի օրվայ մէջ չի յաջողվել լուծել այնքան խնդիրներ, ինչպէս այսօրվան ժողովին: Զօնայի մասին ոչ մի լաւ բան չըլվից— իրաւաբանական, բժշկական, դպրոցական գործերի և աղմինիստրացիայի մասին: Մէկը միւսից վատ դրութեան մէջ է. բայց ամենագլխաւոր հարցը դարձեալ հացի խնդիրն է: Թվում էր, թէ չէզօք գօնան մի դքսիս պիտի լինէր, իբրև վիճելի երկիր, և բարիքները պիտի թափվէին երկու կողմից էլ: Բայց ստեղծվել է մի դրութիւն, որ լուեցին մի խօսքով շատ գեղեցիկ բնորոշել է— «անտէր գօն»...

Այս համագումարը ցոյց է տալիս, որ անտէր գօնայում կան կենսունակ ոյժեր, որոնք կարող են գործը իրանց ձեռքը վերցնել և ապացուցել, որ տէրը ինքը ժողովուրդն է: Չէզօք գօնան ոչ մի կողմից, ոչ մի պետութիւնից չի կարողանում ոչինչ ստանալ, բայց իր ունեցածը արտահանում են անարգել. գօնայից տարվել է քառասուն միլիօնի ապրանք և ներս մուծվել միայն 5 միլիօնի: Եթէ այդ հսկայական արտադրութիւնը կազմակերպված ձևով լինէր կատարված, Լօոին այսօր քաղցած չէր լինի և իրան բաւական հաց կուենար: Այսուհետև նէյտրալ գօնայի կենսունակ ոյժերը պէտք է կազմակերպեն ապրանքների այնպիսի փոխանակութիւն, որ Լօոին ստանայ իրան հարկաւոր պարենաւորման պաշարը: Կօօպերատիվները նոյնպէս կարող են մեծ դեր կատարել այդ խնդիրում: Վրաստանի ազգային խորհուրդը գօնայից եկել են խնդրատուներ, որոնք խնդրել են նպաստ հաց, անձար ժողովրդի համար: Ազգային խորհուրդը կազմված է Վրաստանի հայութեան կարիքների համար և ձևական տեսակէտից նա անելիքներ չունէր գօնայում: Բայց այնուամենայնիւ ազգային խորհուրդը ի նկատի ունենալով ընդհանուր քաղաքական անորոշ կացութիւնը, մի

կացութիւն, որ որակվում է «անտէր» բառով, նա գտաւ անհրա-
ժեշտ հնարաւորութեան սահմաններում հասցնել զօնայի գիւղա-
ցիութեան պարենաւորման և բժշկա-պանիտարական օգնութիւն:

Մի քանի ամիս առաջ, երբ հաղորդակցութեան բացակայու-
թեան պատճառով հսկայական քանակութեամբ — հարիւրաւոր վա-
զոններով ալիւր մնում էր կանգնած Սանահին կայաքանում,
դիմեցինք Վերմիշեանին և խնդրեցինք զօնային և օգնութիւն
հասցնել: Մեզ յաջողեց այդպիսով նէյտրալ զօնային տալ տասն-
տասնեկինգ վագօն ալիւր, որովհետեւ դրանից Հայաստանը անմի-
ջապէս չէր տուժում: Այսուհետեւ նէյտրալ զօնան պարենաւորման
օգնութիւնը պէտք է ստանայ անմիջապէս Հայաստանից, Ղարա-
քլիսայից: Բայց նէյտրալ զօնայի ժողովուրդը պէտք է իմանայ,
որ Հայաստանում ապրող հայերի խոշոր մասը գաղթականներ են
և շատ չպէտք է պահանջել Հայաստանի կառավարութիւնից:
Զպէտք է մոռանալ, որ նէյտրալ զօնան որքան էլ անմիջապէս
գրութեան մէջ լինի, նա այնուամենայնիւ չի տուժել անընդհատ
պատերազմներից: Բայց միայն հայոց կառավարութեան վրայ
չըպէտք է ծանրանալ: զօնան, իբրեւ մի վիճելի երկիր, իրաւունք
ունի պարենաւորման աշակցութիւն պահանջել նաեւ Վրաստանից,
որ այդ տեսակէտից աւելի նպաստաւոր պայմաններում է
գտնվում:

Նէյտրալ զօնան ստեղծվեց մի-երկու ամսով և կազմած է
Փարիզի կօնֆերանսի հետ: Բայց զօնայի խնդրի լուծումը ձգձգ-
վում է. անհրաժեշտ է օր առաջ մտցնել ղեմստօրյական հաստա-
տութիւններ, որոնք մտցրված են Վրաստանում և Հայաստանում
և որոնց դէմ առարկութիւններ չեն կարող լինել, որպէսզի նէյ-
տրալ զօնայի ժողովուրդի արդի գրութիւնը մի փոքր բարելոգվի:
Եթէ այստեղ արծարծված հարցերի մի երրորդ մասը իրականա-
նայ, կեանքի մէջ մտցվի, ապա «անտէր» զօնայի վիճակը բաւա-
կան կը փոխվի:

Ա. Աթանասեան.— Ես կուզէի մի քանի խօսք ասել կօ-
պերատիվների առթիւ, որոնց նշանակութեան մասին պարենա-
ւորման գործում զեկուցանողը թեթեւակնարկ արաւ: Կօպերատիվ-
ների թիւը Լօռում սրանից վեց տարի առաջ հասնում էր 37,
բայց սրանից մի քանի ամիս առաջ Ալլավերդում միութիւն է
կազմել, որի մէջ մտել են տասնեկինգ կօպերատիվ. մի քանի
առաւական գիւղեր չեն մտել միութեան մէջ: Այդ գիւղերում

ընդ որ գիւղացիք անդամ են, որովհետեւ հասկանում են կօպերա-
տիվի օգտակարութիւնը: Երբ մեր կօպերատիվները կազմած
էին 3աւթօյ3-ի հետ, և չկար այժմեան բաժանումը, հեղտութեամբ
ստանում էին ապրանքներ. բայց երբ 3աւթօյ3-ը դարձաւ միայն
վրացական և Հայաստանի կօպերատիվներն էլ առանձին կազ-
մակերպվեցին (Հայկօպ), նէյտրալ զօնայի կօպերատիվները մնա-
ցին անտէր և ապրանքներ տալիս են մեզ մեծ աղաչանք պա-
ղատանքներով: Հայկօպը չէր օգնում, որովհետեւ միջոցներ չունէր:
Մենք մտածում ենք Մօսկվայի Ժողովրդական բանկում կրէդիտ
բանալ և անմիջապէս ապրանք ստանալ Լօռվայ կօպերատիվ-
ների համար:

Արամայիս Երզնկեան.— Ձեր պահանջի հիմնական կէտե-
րից մէկն էլ այն է լինելում, որ զօնան չպէտք է համարվի օտար
հայ և վրացի կառավարութիւնների կողմից: Վիճող պե-
տութիւնները ասում են, որ մաքսային արգելքի վերացումը կա-
րող է չարիք դառնալ, վնասել իւրաքանչիւրի պետական շահե-
րին, որովհետեւ հակառակ պետութիւնը կարող է յօգուտ իր շա-
հագործել մաքսային արգելքի վերացումը: Բայց դրա առաջ դրժ-
վար չէ առնել. եթէ ապրանքները ստացվին Լօռվայ կօպերա-
տիվի կամ ղեմստօրի կամ Գործադիր Մարմնի հասցէով, ապա
հասարակական մարմինի կօնտրօլը ինքնին արդէն բաւականին
երաշխաւորութիւն է, որ իջարը չի գործադրվի ապրանքների ա-
ղատ մուտքը Լօռի: Եթէ յաջողի ձեր գործադիր մարմնին լուծել
մաքսային խնդիրը ցանկալի իմաստով, անշուշտ պարենաւորման
հարցը մասամբ լուծած կը լինէք և լօռեցին քաղաքում ծախած
ապրանքների փոխարէն ապրանք կը ստանայ՝ փոխանակ թղթա-
դրամների:

Ա. Աթանասեան.— Ամերիկայից ստացվել է մի վագօն շոր
զօնայի աղքատ աղքատնակութեան համար: Այդ ապրանքից տաք
և լաւ շորերը կօմիսարիատը ջուր է իր համար, մի մասը բա-
ժանել միլիցիոներներին, իսկ անպէտք շորերը կապոց-կապոց
ծախում է: Կօպերատիվների Միութեան վարչութիւնը ուզում էր
ից վրայ վերցնել այդ մնացորդ շորերի բաժանումը, բայց չը
յաջողվեց, կօմիսարիատը մերժեց: Գործադիր Մարմնին պէտք է
յանձնարարել ստանալ այդ շորեղէնը և իր հսկողութեամբ աղ-
քատներին բաժանել այն, ինչ ստացված է նրանց անունով,
նրանց համար:

Սուրեն Երզնկեան.— Դիմեցէք տեսէք, թէ ինչ դուրս կը գայ, դուրս կը գայ էն, ինչ դուրս եկաւ կօօպերատիվներ ղեկավարող Ալլաիերդու կաթնարիաւր ձեռքիցը բաց չի թողնի իր ճանկն ընկած չաղ պատառը: Ես կարծում եմ, որ պէտք է դիմել Ամերիկական Կոմիտէին և բողոքել, թէ Լօսվայ արդէն բաւականին շահագործված աղքատ ժողովրդի անունը մի աւելորդ անգամ ևս անօրինակ կերպով շահագործվում է: Բերվում են Ամերիկայից շորեր աղքատների անունով և ուտում են կաթնարները: Պէտք է միաժամանակ լրագրական նիւթ դարձնել էս շորերի պատմութիւնը, որ արար աշխարհն իմանայ Ալլաիերդու կատարված խայտառակութիւնները:

Ա. Միանսարեան.— Շորերը Ամերիկական Կոմիտէն ծախում է թիֆլիսում 100—1000 ռուբլի արժողութեամբ: Կարող է պատահել, որ այստեղ էլ նոյնն է կատարվում: Որպէսզի բացասական հետեանք չունենայ մեր դիմումը, որովհետև ամերիկացիք փափկանկատ մարդիկ են, ցանկալի է այդ խնդիրը թողնել Գործադիր Մարմնի հայեցողութեան:

Սուրեն Երզնկեան.— Թողնենք ուրեմն շորերի խնդիրը: Թող Գործադիր Մարմինը անի ինչոր հարկաւոր կը համարի էդ մասին անել: Ինձ հետաքրքրում է Սադախօի և Քեօլազիւրանի մաքսային կօնտրոլի խնդիրը: Մենք պէտք է ամեն կերպ փորձենք ազատվել այդ խեղտո՞ղ պարաններից, որովհետև եթէ մենք չը կռվենք մաքսային անարդարութեան դէմ, ապա ոչ մի դրական բարեւաւում չենք կարող տալ մեր զօնային: Եթէ հնարաւոր ինչէր, մենք էլ մեր կողմից արգելքներ պիտի կառուցէինք Լօսուց ապրանքներ արտահանելու դէմ: ապրանքի դէմ ապրանք: Թող ապրանք տանեն, ու ապրանք թողնեն բերենք:

Արամայիս Երզնկեան.— Այդ խնդիրը նուրբ խնդիր է: Թողնենք Գործադիր Մարմնին այդ մասին մտածելու:

Նախագահ.— Առաջարկում է հետեւալ բանաձևը մաքսային և պարենաւորման խնդիրների մասին.

— Ի նկատի ունենալով Լօսվայ շրջանի մաքսային անարդար և անօգնական դրութիւնը, երբ հարկան պետութիւնները անարգել կերպով արտահանում են Լօսուց ամեն տեսակ մթերքներ, մինչդեռ խստիւ արգելում են ներմուծումը, որի պատճառով տեղի են ունենում ամեն տեսակի զիջողմանք և սընժում կաշառակերութիւնը, Լօսվայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդ որոշեց.

1. Յանձնարարել Գործադիր Մարմնին դիմել հայոց և վրաց կառավարութիւններին, եթէ անհնար է խաղաղ վերացնել մաքսային արգելքները, գոնէ թեթեւացնել և խիստ կօնտրոլի տակ դնել մաքսատների գործունէութիւնը:

2. Դիմել նոյն կառավարութիւններին՝ դնել Գործադիր Մարմնի տրամադրութեան տակ որոշ քանակութեամբ ալիւր տեղական աղքատ ազգաբնակչութեան բաժանելու համար:

3. Դիմել Մերձաւոր Արեւելի Ամերիկական Նպաստից Կոմիտէին պարենաւորական օգնութիւն ստանալու համար:

4. Պահանջել նէյտրալ զօնայի զէմատվոյի և կօօպերատիվի հասցէին ուղղած ապրանքների համար աղատ ներմուծման իրաւունք:

Բանաձևը ընդունվում է:

Նախագահ Ս. Զուրաբեան.— Խօսքը պատկանում է ընկեր Աշոտին զէմատվոյի մասին զեկուցանելու:

Ա. Աթանասեան.— Մեր այս բոլոր որոշումները, որ հանցիքնք այսօր այստեղ, կարող են կիրարկել, եթէ լինի զէմատվոյ Զէմատվոյ—դա դուք ինքներդ էք, ձեր միութիւնը, ձեր ինքնագործունէութիւնը: Եթէ կայ այս երէք տվեալը—գործը կերթայ կանոնաւոր: Նէյտրալ զօնան բաժանված է երեք ըայօնական կամիսարութեան, ուրեմն մենք պէտք է իրականացնենք նախ երեք վօլօստնոյի զէմատվո—Շնողի, Ուզունլարի և Վօրօցովկայի շրջանների համար, և մի ընդհանուր զէմսկի կենտրոն—գաւառական զէմատվո—ամբողջ զօնայի համար: Զօնան որպէս երկու հարկան պետութիւնների վիճելի տարածութիւն, մենք չենք կարող զէմատվոն կազմակերպել զեկավարվել Հայաստանի կամ Վրաստանի զէմսկի կանոնադրութեամբ, այլ որպէս հիմք կընդունենք ժամանակաւոր կառավարութեան մշակված պօլօժէնիան, որը հիմք է ծառայում, յաճախ բառացի, Վրաստանում և Հայաստանում գործող զէմատվային կանոնադրութիւնների: Այստեղ ներկայ են Լօսվայ գրեթէ բոլոր գիւղերի ներկայացուցիչներ, որոնք ժողովի վերջում կընտրեն Գործադիր Մարմին: Այդ գործադիր մարմինն պէտք է տալ զէմսկի ուպրավայի, վարչութեան բոլոր ֆունկցիաները: Միաժամանակ պարտաւորեցնել Գործադիր Մարմնին որքան կարելի է կարճ ժամանակում կազմակերպել վօլօստնոյի զէմատվոների ընտրութիւնները:

Գործողով (Պրիվօլնոյի ներկայացուցիչ).— Մենք լիազօրված ենք

մեզ ընտրողները կողմից միայն զէմստվոյի մասին խորհրդակցելու, և ոչ թէ զէմսկի վարչութիւն ընտրելու, ուստի մենք ձեռնապահ կը մնանք զէմսկի վարչութեան ընտրութեան խնդրում:

Մախազար.— Ձեր մանդատում պարզ ասված է, որ դուք ուղարկվում էք Ուզունլար զէմստվոյի և այլ խնդիրների մասին մտածելու, խորհրդակցելու և ձեզ չի արգելվում, չի ասված դոնէ ձեր մանդատում, թէ դուք իրաւունք չունէք ընտրել այս կամ այն մարմինը, եթէ դուք հարկաւոր գտնէք: Դուք անձապէս կարող էք չըմանակցել ընտրութեան, դա ձեր գործն է. բայց ձեր չըմանակցութիւնը չէք կարող պատճառաբանել ձեր մանդատով:

Ռուս գիւղերի ներկայացուցիչներ.— Մենք կըմանակցենք ընտրութեան և նոյնիսկ ունենք մեր կանդիդատը վարչութեան համար հէնց Պրիվոլնօէ գիւղից, ըսկեր Բօլօտնիկովին:

Մախազար.— Խնդիրը պարզված է, խօսքը պատկանում է ընկ. Սուրէնին:

Սուրէն Նրզնկեան.— Դժբախտաբար գիշերվայ ժամի 10 ից անց է և ես չեմ կարող երկար կանգ առնել զէմստվոյի մասին Բայց շատ կուզէի, որ դուք բոլորդ լրիւ գաղափար կազմէիք՝ ինչպէս մեր լոռեցիք ասում են «զէմսկոյի» մասին, որպէսզի երբ դուք ձեր գիւղերը վերադառնաք՝ կարողանաք դուք էլ ձեր հերթին բացատրել, հասկացնել ձեր ընկեր գիւղացիներին թէ ինչ բան է զէմստվօ ասածը: Ես կանգ կառնեմ զէմստվօ միայն մի երկու կողմի վրայ, որոնք իմ կարծիքով ամենից աւելի են հետաքրքրում մեզ՝ այսինքն ընկերային և սոցիալատրատիւ, հասարակական գումարների ծախսելու և միլիցիայի խնդիրների վրայ: Բայց նախ ինչ է զէմստվօ. պարզեմ մի քանի խօսքով:

Ձէմստվօն — տեղական ինքնավարութիւնն է. մի նահանգի, գաւառի կամ վօլօստի ժողովրդի ընտրածներից կազմված հաստատութիւն: Դաւառում կամ վօլօստում բնակող չափահաս անդամները ընտրում են իրանց միջից իրանց վստահութիւնը վայելող ներկայացուցիչներ, ծայնաւորներ, որոնք կազմում են գաւառի կամ վօլօստի ձայնաւորների ժողովը, գաւառական կամ վօլօստնոյ զէմսկի խորհուրդ: Ոչ մի խնդիր, կուլտուրական թէ անտեսական գաւառում կամ վօլօստում չի կարող լուծվել առանց համապատասխան զէմստվօի գիտութեան և հաւանութեան:

Էնտեղ, ուր կատարեալ տեղական ինքնավարութիւն կայ, զէմստվօն հանդիսանում է միաժամանակ կենտրոնական իշխանութեան տեղական — գաւառական կամ վօլօստնոյէ ներկայացուցիչը. կենտրոնական իշխանութիւնը իր կամքը կարող է իրականացնել տեղում միայն տեղական ինքնավարութեան ձեռքով և տեղական զէմստվօն նոյնիսկ իրաւունք ունի չը կատարել կենտրոնական իշխանութեան հրամանը, կարգադրութիւնները, եթէ միայն էզ կարգադրութիւններն ու հրամանները օրէնքի վրայ չեն յենվում, օրէնքից չեն բաղխում:

Ձէմսկի ձայնաւորների ժողովը կամ խորհուրդը ընտրում է իր միջից մի Դործադիր Մարմին կամ զէմսկի վարչութիւն, որը էզ խորհրդի կամքի թարգմանն է, նրա որոշումների իրականացողը: Միլիցիան, ագմինիստրացիան, որ Լօովայ մեծ ցաւերից մէկն է, ամբողջապէս ենթարկվում է զէմստվօին, որի վարչութեան անդամներից մէկը վարում է ագմինիստրատիվ բաժինը: Ամեն մի զէմսկի ձայնաւոր, այսինքն ժողովրդից ընտրված ներկայացուցիչը իրաւունք և միջոց ունի միլիցիայի-ագմինիստրացիայի մեր նկատած ապօրիութիւնը — գողութիւնը, թալանը, կաշառակերութիւնը, կոպտութիւնը, անքաղաքավարի վարմունքը դէպի իրան դիմողները — մերկացնել, հրապարակ հանել և պահանջել, որ մեղաւորին պատժեն: Տեսնում էք, որ միլիցիան ամբողջապէս ժողովրդի ձեռքին է լինելու, ժողովրդի ծառան և ոչ թէ նրա գլխին պատուհաս, նրա հրամանները կատարող և ոչ թէ հրամաններ տուող:

Հասարակական գումարների ինչպէս գանձումը, նոյնպէս և ծախսումը գանվում է դարձեալ զէմստվօյի ձեռքին. ոչ մի կուպէկ ոչ ոք իրաւունք չունի հաւաքելու վօլօստի շրջանում, առանց վօլօստնոյ զէմսկի խորհրդի թոյլտվութեան ու հաւանութեան, իսկ գաւառում՝ գաւառական զէմստվօի հրամանի: Նոյնպէս և ծախքերի վերաբերեալ՝ բոլոր ծախքերը պէտք է ընդունել ինքն ժողովրդի համար, նրա ներկայացուցիչների կամքով: Երբ ժողովուրդն է լինելու հարկեր սահմանողն ու հաւաքողը և ժողովրդից հաւաքած գումարների ծախսողը, ապա հանգիստ և ժողովրդից հաւաքած գումարների ծախսողը, ապա հանգիստ և ժողովրդ էլ լինել, որ ոչ մի կուպէկ դուր չի ժողովի և ոչ մի կուպէկ էլ դուր չի խաբշվի. մանաւանդ միամիտ պիտի լինէք, որ ագմինիստրացիայի փորը չեն ամի բոլոր ժողովրդական գումարները, որ ժողովրդի արեւն-քրտինք կուպէկների մեծագոյն մասը

կերթան կուլտուրական — գալրոցի, ճանապարհների, հիւանդանոցների, գիւղատնտեսական օգնութեան և այլ նման պէտքերի վրայ: Ընդունված ձևն է, որ ընտրված ղեկավարին վարչութիւնը ներկայացնում է ղեկավարին ձայնավորների ժողովին մուտքի և ելքի նախահաշիւ, ժողովը քննում է էդ նախահաշիւը, ինչպէս մուտքի ամեն մի կէտ, նոյնպէս և ծախքերը: Ձեկավարին վարչութիւնը պարտաւոր է ղեկավար խորհրդի կամ ժողովի որոշված ձևով ծախսել հասարակական գումարները:

Ժամանակը ուշ լինելով բաւականաճ էսքանով, մանաւանդ որ նախագահն էլ յիշեցնում է ինձ, որ պէտք է վերջացնել խօսքս:

Ուրեմն, տեղական ինքնավարութիւնը — ղեկավարը էն հաստատութիւնն է, որ ամենից աւելի անհրաժեշտ է էսօր մեր անտէր զօնային, ու ես համոզված եմ, որ էն գործադիր մարմինը, որ կընտրէր, կըհաստատի Լօուս ղեկավարին հաստատութիւններ: Մեզ հարկաւոր չի ղեկավարի համար մեր հարեան պետութիւններից թոյլատրութիւն խնդրել, նրանց հրամանի սպասել: մենք էսօր կընտրենք մեր Գործադիր Մարմինը, նրա միջից էլ կընտրվի ղեկավարին վարչութիւնը, որ իսկույն ևեթ կըսկսի իր գործը: հարեան պետութիւններին միայն իմաց կըտանք, որ էսօրվանից մեր Լօուս ժողովրդի կամքով նէյտրալ զօնաշրջում ղեկավար է հաստատվել:

Նախագահ. — Խնդրեմ միանգամայն պարզ է. առաջարկված է հետեւեալ բանաձևը.

— Նէյտրալ զօնայի գիւղացիական պատգամաւորներ Խորհուրդը ի նկատի ունենալով.

1. Նէյտրալ զօնայի իրաւական և տնտեսական ծայր աստիճան անմխիթար ղրութիւնը.

2. որ ղեկավարին հաստատութիւնները մտցված են և մտցվում են ինչպէս վրաստանում, նոյնպէս և Հայաստանում:

3. որ միայն ղեկավարի հաստատութիւնների միջոցով հնարաւոր է բոլորովն երկրի ծանր ղրութիւնը.

Որոշեց —

1. Համարել ներկայ Գիւղացիական Պատգամաւորների Խորհուրդը զօնայի ղեկավար ձայնավորների առաջին խորհուրդը.

2 Ընտրված Գործադիր Մարմինին տալ զօնայի ղեկավարին վարչութեան (ուպրավայի) բոլոր Ֆունկցիաները, պարտաւորե-

լով վերջինիս սահմակարձ ժամանակամիջոցում կազմակերպել ղեկավարին ընտրութիւններ, ընդունելով որպէս հիմք երեք վօլտսոյէ ղեկավար — Շնորհի, Ուղունլարի և Վօրոնցովկայի — իսկ զօնան՝ որպէս գաւառական (ուեղդոն) ղեկավար — վելով ժամանակաւոր կառավարութեան հրատարակած ղեկավարի օյական կանոնադրութեամբ.

3. Յայտնել հայոց և վրաց կառավարութիւններին Լօուս ղեկավարի գոյութեան մասին ի գիտութիւն:

Առաջարկված բանաձևը ընդունվում է:

Նախագահ. — Մեզ մնում է այժմ կատարել գործադիր մարմին և ղեկավար վարչութեան ընտրութիւնը, որպէսզի մեր աշխատանքները վերջացած լինեն: Քանի անդամից կըցանկանալիք, որ կազմված լինէր գործադիր մարմինը և ղեկավար վարչութիւնը:

Սուրէն Երզնկեան. — Ինձ թվում է, որ գործադիր մարմինը կազմված պէտք է լինի իննը հոգուց, և պէտք է աշխատել, որ նրա մէջ տեղ գտնեն բոլոր ազգութիւնների աշխատաւորների ներկայացուցիչներ, որպէսզի կենդանի կապ հաստատվի Լօուս բոլոր գիւղերի մէջ: Ձեկավարին վարչութեան անդամների թիւը պէտք է ընդունել հինգ, որոնք կարող են լինել և պէտք է լինեն գործադիր մարմնի անդամներից:

Նախագահ. — Ես քվէարկում եմ ընկ. Սուրէնի առաջարկը — գործադիր մարմնի համար իննը անդամ, իսկ ղեկավարին վարչութեան համար հինգ: Ընդունվում է առաջարկութիւնը:

Առաջարկութիւնը անցնում է:

Նախագահ. — Այժմ ավէք կանգիտանների անուններ գործադիր մարմնի համար:

Ձայներ. — Սուրէն Երզնկեան, Աթանասեան, Զուրաբեան Սէրգի, բժ. Մելիք Գրիգորեան, Զուրաբեան Մալսէս, Պետր Բօլօտիկով, Օրով, Կուրբան Օզլի և Ֆիլիպ Պապաքսէնիդով:

Նախագահ. — Ես կը քվէարկեմ առանձին առանձին իւրաքանչիւր թեկնածուի անունը:

Քվէարկութեամբ առաջին երեքը անցնում են միաձայն, միւսները ձայների բացարձակ մեծամասնութեամբ:

Սուրէն Երզնկեան. — Ես առաջարկում եմ գործադիր մարմնի առաջին հինգ անդամների համարել Լօուս Նէյտրալ զօնայի ղեկավարին վարչութեան անդամներ. նրանք բոլորն էլ ապրում են Ուղունլարում և կարող են ամբողջապէս նվիրվել գործին.

բայց էգ չի նշանակում, թէ գործադիր մարմնի միւս անդամները չեն կարող մասնակցել ղէմակի վարչութեան աշխատանքներին: Գործադիր մարմինը ամեն վարչկեան կարող է ստուգել ղէմակի վարչութեան գործունէութեանը և ղէմակի վարչութիւնը պարտաւոր է գործադիր մարմնի թէև բացակայ-բայց յետաքրքրվող իւրաքանչիւր անդամին ամէնամասնամասն կերպով ծանօթացնել հաշիւներին ու գործերին ընթացքի հետ:

Այդ առաջարկը ընդունվում է:

Սուրէն Երզնկեան.— Մի վերջին խօսք էլ: Ես առաջարկում եմ շնորհաւորական հեռագիր ուղարկել մեր սարերի ու ձորերի անմահ երգիչ լուսեցի Յովհաննէս Թումանեանին, որը անկեղծ պէտք է ուրախանայ, երբ լսի մեր էս մեծ խորհրդի աշխատանքների մասին, երբ իմանայ, որ Լօռումն էլ տեղական ինքնավարութիւն է հաստատվել: Նա ղէմատվօի անկեղծ բարեկամն է և սրանից դեռ երկու տարի առաջ, ես շատ լաւ յիշում եմ, նա ինձ հետ մեծ ոգևորութեամբ էր խօսում ղէմատվօյի մասին, երբ Ղաղախի, Լօռվայ, Փամբակի դանադան վայրերում փորձեր էր լինում ղէմատվօյական—կուլտուրական աշխատանքներ սկսել: Մեր մեծ լուսեցին ղէս-ղէն ընկած աշխատում էր օգնել նրանց, դեղեր հասցնել գաւառին: Կազմակերպիչ բիւրօն նրան հրաւիրել էր էս ժողովի: Բայց նա զժբադտաբար անկարող էր գալ և ինձ գրած նամակում իր շնորհակալութիւնն է յայտնում հրաւերի, արած պատվի համար: Յովհաննէս Թումանեանը—մեր սարերի հարազատ գաւաղն է, յիշենք նրան Լօռվայ ժողովրդի էս նշանաւոր օրը, էս նշանաւոր ժողովում:

Զայներ.— Անպատճառ, դարգենք թէլէգրամը:

Առաջարկը ընդունվում է:

Նախագահ.— Ես ևս առաջարկում եմ շնորհաւորական հեռագիրներ ուղարկել մի այլ լուսեցու, որ իր ամբողջ կեանքը ղէմատվային գործ է կատարել և կովել ղէմատվօյի համար: Դա—Աւէտիս Սահակեանն է: Նա անկեղծ կերպով պիտի ուրախանայ, երբ լսի, որ Լօռում ղէմատվօ է հաստատուել և ուրախ կըլինի օգնել ու ծառայել իր հայրենի ղէմատվօյին:

Ընդունվում է առաջարկը:

Նախագահ.— Անհրաժեշտ է նոյնպէս հեռագրել Վրաստանի և Հայաստանի Քաղաքների Միութիւններին, որոնք մեզ ապագայում շատ օգտակար կարող են լինել:

Առաջարկը նոյնպէս ընդունվում է:

Նախագահ.— Արդէն բաւական ուշ է: Դիշերվայ Ժամը 12-ը. թոյլ տվէք ինձ նախագահութեան կողմից մեր հիացմունքը յայտնել ներկայացուցիչներին, որ ամբողջ օրը այդքան ուշադիր ու համբերութեամբ հետեցիք խորհրդի աշխատանքներին: Այսօրվան օրը—Լօռին երկար չի մօռանայ. նա պատմական մեծ նշանակութիւն ունի Լօռվայ գիւղացութեան զարգացման համար:

Յայտարարում են Լօռվայ նէյտրալ զօնայի Գիւղացիական Պատգամաւորների խորհուրդը փակված:



ՆՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ա) «ԵՐԻՆՏ» կոմունիստական
ժողովածու I սեր.

բ) «ԵՐԻՆՏ» " " II սեր.

գ) «ԵՐԻՆՏ» " " III սեր.

դ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Լօռվայ
նեյտրալ զօնայի Գիւղացիական
Պատգամաւորների խորհրդի I.

ե) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Լօռվայ
նեյտրալ զօնայի Գիւղացիական
Պատգամաւորների խորհրդի II.

ՀՀ Ազգային գրադարան



NL0218527

40. 049